



ՆԱՅԱՍԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
NATIONAL  
LIBRARY  
OF ARMENIA

**Սույն ստեղծագործությունը հասանելի է  
Հայաստանի ազգային գրադարանի  
թվային շտեմարաններում՝ համաձայն  
դրա իրավատիրոջ հետ կնքած  
Համագործակցության պայմանագրի, և  
կարող է օգտագործվել բացառապես  
օրենքով նախատեսված կարգով՝  
պահպանելով հեղինակի և իրավատիրոջ  
հեղինակային իրավունքները**

ՄԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՄԻ ԿԱԹՈՒԼ  
ԲԱՐՈՒԹՅՈՒՆ

73(47.925)

Թ - 840

ՄՅ(47.925)

Թ - 84 Ս

21 OCT 2010

ՄԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

# ՄԻ ԿԱԹԻԼ ԲԱՐՈՒԹՅՈՒՆ

(Հոգվածներ, հարցազրույցներ)

Երևան, «Նաիրի», 2002

07 AUG 2013

1627

ՆՎԻՐՎՈՒՄ Է  
ԼԵՎՈՆ ԹՈՔՄԱՋՅԱՆԻ  
ԾՆՆԴՅԱՆ 65-ԱՄՅԱԿԻՆ


ԵՐԵՎԱՆԻ  
ԿՈՄԵՏԱՐԻԱՏ

(գրականության, արվեստի և հասարակական գիտությունների)

Գրվել է «ճշմարիտ օրագրություն»  
քանդակագործ Լևոն Թոքմաջյանի մասին,  
որի արվեստի գեղեցկության խորանի առաջ  
վառվում են անհունի կապույտ երազների մոմերը:



787-2002



## ԵՐԿՈՒ ԽՈՍԸ

Գրող-հրապարակախոս-տեսաբան Միլվա Մուքիասյանը երկու տասնամյակ լուսաբանում էր Հայոց Առաքելական եկեղեցու առօրյան՝ ներկայացնելով թեմերի ու թեմակալ առաջնորդների գործունեությունը, եկեղեցական ու հոգևոր-կրթական գործընթացները և նոր ժամանակներում եկեղեցու, կրոնի դերն ու նշանակությունը ազգի կյանքում: Եվ այդ հոդվածներից ու հոդվածաշարերից, հեռուստատեսային և ռադիոհաղորդումներից լավագույնները համախմբելով՝ հրապարակ հանեց գրքերի մի մատենաշար՝ «Պատիվ արեք հայոց վեհափառներին», «Նվիրական ուխտյալներ», «Խորհրդամիշ մտքի ու խղճի», «Գործունեության հավատամքը ծրագիր է և երդում»: Հայոց եկեղեցու և հոգևորականների գործունեությանը ի մոտո հաղորդակցվել ցանկացող ընթերցողների համար թվարկված գրքերը բարի ծառայություն մատուցեցին, միաժամանակ հանդիսանալով մեր օրերի անկողմնակալ տարեգրությունը հոգևոր աշխարհի:

Եվ հանկարծ շնորհալի լրագրողը վերջերս կտրուկ շրջադարձ կատարեց՝ հայացքը բևեռելով կերպարվեստի անդաստանին, որի արդյունքում ծնվեց մի նոր գիրք՝ «Արամ Իսաբեկյանի գույները...»: Շատերի համար կարող է անակնկալ թվալ այս շրջադարձը, բայց ես կարծում եմ, որ լրագրող Միլվա Մուքիասյանի համար օրինաչափ է, քանզի նա հրաշալի զգացողություն ունի կերպարվեստի և երաժշտության բնագավառում, ու բնավ էլ

սույն գիրքը պատահական շրջադարձ չէ նրա ստեղծագործական կյանքում:

Գրքի հերոսը մեր ժամանակների նշանավոր նկարիչ և հասարակական գործիչ, Երևանի պետական գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Բսաբեկյանն է: Միլվա Սուքիասյանը, հավատարիմ իր նախասիրություններին, ոչ թե արևի վրա բծեր է փնտրում, այլ արևի ողջ լուսավորության մասին է վկայակոչում: Արամ Բսաբեկյանի համառ ոգին, ստեղծագործական որոնումներն ու նաև կյանքում կրած ձախողումները Միլվա Սուքիասյանի գրչի տակ արվեստի տեսաբանական ու քաղաքականության խորունկ հնչեղություն են ստանում: Ասվածից, անշուշտ, չպետք է հետևեցնել, թե Միլվա Սուքիասյանը կարողացել է հայկական կերպարվեստը, ի մասնավորի նկարչությունը, արվեստի քաղաքականության վերածել, բայց փորձել է թթվածին ներարկել մեր առօրյայում ստեղծագործող վառվռուն մի անհատականություն, որպիսին Արամ Բսաբեկյանն է:

Միլվա Սուքիասյանը այսօր քանդակագործության տեսական հարցերին նվիրված մի ուշագրավ գիրք է դրել ընթերցողի սեղանին, որի հերոսը տաղանդավոր քանդակագործ Լևոն Թոքմաջյանն է: Մեծ վարպետությամբ կերտելով ազգի շահերով ապրող գործչի ու արվեստագետի կերպարը՝ նա ընթերցողի դատին է ներկայացնում Լևոն Թոքմաջյանի նկարագիրը և առանց երկմտելու կարելի է ասել, որ ժողովուրդը հպարտություն է ապրում իր ծոցից ելած, սնած-պահած քանդակագործի համար:

Հեղինակի մեծ ուժն այն է, որ նա զարմանալի ճկունությամբ է կառուցում, ստեղծում հոդվածները, որ դրանք ասես ի ծնե են, ի վերուստ են միահյուսվում: Եվ քանորդում ձևավորվում է քանդակագործի կերպարը, բարձրանում Լևոն Թոքմաջյանը՝ ժողովրդի հույսերով ու

ցավերով, մտածումներով, երազներով բեռնավորված մարդ-արվեստագետը:

Եվ Լևոն Թոքմաջյանը նախ և առաջ մարդ է՝ սովորական, մեզ նման մարդ, որ սիրում է կյանքը, աշխարհը, նա էլ երազանքներ ունի, և ամենաեականն այն է, որ նա քայլում է իր ժողովրդի դարավոր երազների մայր մատույցներում:

Ձեռնպահ են մնում նախօրոք գիրքը վերլուծելու կամ գնահատելու զայրակությունից՝ այն թողնելով ընթերցողին: Այն հազվադեպ գրքերից է, որ կարող ենք անվերապահորեն վկայել, թե տաղանդավոր քանդակագործն ու նույնքան շնորհալի տեսաբանը գտել են միմյանց:

Շնորհալի հեղինակին ցանկանում են ստեղծագործական նորանոր իրագործումներ: Նա տակավին երիտասարդ է և լի ստեղծագործական եռանդով:

Հուսանք՝ ապագայում ևս մեզ կուրախացնի գրողի, հրապարակախոսի, տեսաբանի իր հյուրեղ, խանդավառ, խորաթափանց ակնարկներով, որոնց ընտրանին դարձյալ կարող է նոր գրքի ծնունդ ավետել: Ինչպես ժամանակին Միլվա Սուքիասյանն է լրագրողն է մի առիթով խոստովանել՝ «Ազգի, եկեղեցու նվիրյալներին չեն մոռանում»: Ուստի թող օրհնվի այն գրիչը, որ սերունդներին է թողնում ազգի նվիրյալների հերոսական պատմությունը:

Հովհաննես Մուրադյան

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ ՈՐՈՆՈՂ ՀՈԳԻՆ  
ՀԱՄԱՌ Է ԵՎ ԱՆՆԿՈՒՆ

«Ես չասացի, որ Դուք չեք չարչարվի, ես չասացի, որ Դուք չեք տանջվի, այլ ես ասացի, որ Դուք կհաղթեք»։ Աստվածային նախախնամությունը այսպիսի վճիռ-որոշում էր բաժին հանել Հրաչ Թոքմաջյանի որդուն՝ Լևոնին, որի վաթսուներեքամյա կյանքը կռիվ ու պայքար եղավ մատիտով, գրչով, վրձնով, բրդիչով։ Մինչդեռ հաղթելու համար հարկավոր էր անցնել բարդ ու հակասական ժամանակների միջով՝ քննության երկար ու դժվարին ճանապարհի հաղթահարելով։ Եվ նա հաղթեց, քանզի նրա ճանապարհը լուսավորում էր գեղեցկության, մաքրության, ճշմարտության որոնումը։ Այդ ջախը նրան լուսավորեց թե՛ խորհրդային չափված-ձևված-կանոնակարգված տարիներին և թե՛ Հայաստանի անկախություն ձեռք բերելուց հետո (և նրա ստեղծագործական կյանքում տեղի ունեցավ շրջադարձ պատմական երկու շրջանների միջև)՝ անցողիկի կողքին կուտակելով արվեստի արժեքավոր, մնայուն գործեր։ Արժեքավոր գործերը ոչ միայն նրան հռչակեցին իբրև կայացած քանդակագործ, այլև բերեցին համազգային սեր ու համաշխարհային ճանաչում։

Բնականաբար, վաթսուներեք տարվա կյանքի ճանապարհ կտրած տաղանդավոր արվեստագետի կյանքի պատմությունն էլ մի վեպ է և, ինչպես հատուկ է մեծերի ինքնամեկնության վարքին, երբեմն պարտուրված է ուրիշների համար դժվարաթափանցելիության խորհրդով։

Մանկական երազների քուրայում հյուսված ու թրծված արվեստագետի կյանքը համեմված է նրա հորդաբուխ ծիծաղով, սրտաբաց, միամտություն բուրդով անմիջականությամբ, աչքերի զարմանք կամ ջերմություն արտահայտող ժպիտով, աշխույժ դիմախաղով ձեռքերի շարժումով, երգով, նկարով ու քանդակով:

Գեղեցիկի զգացողության ունակությունը Լևոնի մեջ դրսևորվել է վաղ տարիքում. հինգ-վեց տարեկան տղեկը ներկարար հոր հետ շրջում էր Հայաստանի գյուղերով, հիանում բնության կախարդիչ գույներով, որսում ճշմարիտ ուժը, որն էլ անփոխարինելի նշանակություն ունեցավ նրա նկարչական էության մարմնավորման ու դրսևորման գործում: Ուշի ուշով հետևում էր, թե հայրը բնակարանները վերանորոգել-ներկելու համար ինչպես է տարբեր բաղադրության ու մածուցիկության ներկերից ստանում նոր, ավելի վառ ու նուրբ գույներ և դրանցով ճաշակով պարտեզի վերածում բնակարանը: Այդ ամենը նրա մեջ արթնացնում է նկարելու ցանկություն, և զգացմունքների անմիջականությամբ մանկական վճիտ մտածողության գիտակից հենքի վրա ստեղծագործում իր գունագեղ աշխարհի պատկերավոր դրվագները, որոնց կենսատու ակունքը բխում է գյուղի կյանք ու կենցաղից, մանկության ապրեցնող տպավորություններից ու բնության զարմանահրաշ հարստությունից: Ովքեր առիթ էին ունենում տեսնելու Լևոնի նկարները, զգում էին, որ այդ առույգ, կայտառ երեխայի մեջ աստվածային կայծ կա:

Սակայն հետաքրքրասեր պատանու ձգտումը և նրա մեջ առկայծող տաղանդը կարող էր մարել, եթե նրա արտակարգ ընդունակությունները չտեսնեին ու գնահատեին Երևանի գեղարվեստի ուսումնարանի 1953 թվականի ընդունելության քննության արդարամիտ ու բարեխիղճ հանձնաժողովի դասախոսական կազմը, որտեղ պատանի Լևոնը քննություն է հանձնում:

Նա ջերմ հույսերով ու փափագով ընդունվում է քանդակագործության բաժին: Ու չնայած հակառակ իր կամքի (ուզում էր ընդունվել գեղանկարչության բաժին) կարճ ժամանակամիջոցում այնքան է հմտանում այդ գործում, որ, ինչպես պատմում են ժամանակակիցները, «կարծես ամբողջ կյանքում կավի, քարի ու փայտի հետ էր մենամարտել ու հաղթել»:

Դասախոսները պատանու մեջ սերմանում են լուրջ վերաբերմունք արվեստի, գեղարվեստաստեղծագործական աշխատանքի և ընդհանրապես արվեստագետի կոչման նկատմամբ: Ուսման տարիներին բոլորն էլ շեշտում են, թե ինչպես հասակ է նետել ու ամրապնդվել նրա տաղանդը, ինչ լայն ընդգրկումների է հասել, ինչպիսի խորություններ նվաճել:

Պատկերային մտածողության ինքնատիպությունը իր մեջ ձևավորած երիտասարդը գիտակցում էր, որ տաղանդը նաև պետք է պաշար հավաքի, զարգանա, նրբանա, այսինքն՝ սովորի: Ուստի նա ուսումը շարունակում է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում՝ նշանավոր քանդակագործ Արա Սարգսյանի մոտ:

Բարեսիրտ դասախոսը աշխատում էր ընդունակ աշակերտի մեջ զարգացնել մարդկային մարմնի կենդանի ձևերի, հագուստի բնական ծալքերի և կերպարի բոլոր մանրամասնությունների ճշգրիտ վերարտադրման ունակությունը: Վարպետ քանդակագործն աշակերտից պահանջելով դասական գործերի և հին արվեստի ուսումնասիրություն, նրան միշտ զգուշացնում էր իրականությունից չհեռանալ, քանդակել այնպես, ինչպես որ տեսնում և զգում է: Նա առանձնապես պահանջկոտ էր ավարտվածության նկատմամբ:

Լևոնը ոչ միայն հետևում է սիրելի վարպետի խորհուրդներին (նրանով հիացած մշտապես ջանացել է պահել իր մտքի ու ճաշակի անկախությունը), այլև խո-

րությամբ ապրեց, զգաց, ուսումնասիրեց մեր բազմա-  
դարյան կանգուն հուշարձաններն ու բեկորները, ծաղ-  
կած մատյանները: Այդ հիմքի վրա էլ ստեղծեց քանդակ-  
ներ՝ այնքան հայկական ու պատմական, դարերի խոր-  
քից եկած, և այնքան ժամանակակից ու ժողովրդական,  
որը 1963 թվականին ներկայացրեց խստապահանջ  
երևանցի՝ արվեստասերների դատին: Յուրահանդեսը  
մեր ստեղծագործական երախայրիքն էր, որի հեղինակի  
մեջ տեսնում են հույսեր ներշնչող իսկական արվեստա-  
գետ:

Իսկ իմաստուն և խստապահանջ վարպետը՝ Արա  
Սարգսյանը, զննելով ու հետաքննելով բոլոր գործերը, իր  
հիացմունքն ու գործվագութ ապրումներն է արտահայ-  
տում կարճ, բայց և բնութագրող. «Լևոնի աշխատանքնե-  
րը խորապես ցնցեցին ինձ: Նա գտել է իր արվեստի  
տան բանալին, որտեղից այցելում հեռանում է կախարդ-  
ված»:

Նման գնահատականն արդեն շատ բան էր ասում  
երիտասարդ քանդակագործին: Նրա արվեստը ճիշտ  
ընկալելու բանալին ու հիմնաքարը դարձավ ավագ ար-  
վեստագետի հանձնարարական-բնութագրումը:

Ամենակարևորն այն էր, որ տեսաբանները սկսեցին  
բացահայտել ստեղծագործության առանձնահատկու-  
թյունները և վերլուծություններ ու դատողություններ կա-  
տարել արժեքավոր գործերի համատեքստում, որտեղ  
դրսևորվել է մեր պատկերային մտածողության ուժը,  
որի բացարձակ գնահատականն է, «Արվեստագետը իր  
քանդակները ստեղծել է նյարդերի հյուսված և իր սրտի  
արյունով»:

Լևոն Թոքմաջյանը ժամանակակից ինքնատիպ ու  
տաղանդավոր քանդակագործների փառանգին է պատ-  
կանում, և քարը մեր համար խորհուրդ է, ընդելուզված  
ալիք, որի հուժկու ուժին տիրապետում է արվեստագե-

տը, իսկ առավել համոզվում ես՝ թերթելով մեր մտորում-  
ները. «Իմ նախասիրությունը արձանագործության տե-  
սակների մեջ սկսվում ու վերջանում է, այսպես կոչված,  
«կլոր» քանդակային կոմպոզիցիայով»: Իսկ իմ նախա-  
սիրության բացատրությունը պարզ է և գուցե միամիտ,  
սակայն հենց այդ «կլորության» մեջ եմ տեսնում արձա-  
նագործության ինքնուրույնությունը, իրեն բնորոշող  
տարբերությունը կերպարվեստի մյուս ձևերից, և դա  
«կլոր», ամեն կողմից դիտվող, «կողմ չունեցող» քանդա-  
կային կոմպոզիցիան է, որը, չունենալով (ինչպես գե-  
ղանկարչությունը՝ տարածական հեռանկարչություն)  
գույն, օդայնություն, կոնտուր և սակայն այդ բոլորը ու-  
նենում է, ձեռք է բերում, երբ կանգնած է դրսում, հրա-  
պարակում:

Մի անգամ առիթ եղավ դրանում վերջնականապես  
համոզվելու, երբ բախտ ունեցա տեսնելու Բուրդելի, Մա-  
յոլի արձանները դրսում, Փարիզի Լուվրի թանգարանի  
հրապարակում ցուցադրված, և դա զարմանալի հրաշք  
տեսարան էր: Այդ արձանները, որոնք տեսել էի թանգա-  
րաններում, պատերի տակ, նկարներով շրջապատված,  
կերպարանափոխվել էին, «հավաքել էին» իրենց վրա  
ամեն ինչ, ինչ վերաբերում է նկարչությանը... և՛ գույն, և՛  
օդայնություն, և՛ հեռանկար, անգամ տաք ու սառը գույ-  
ների վալյորայնություն, և՛ շարժում, և՛ ռիթմ, և՛ կոնտու-  
րային բազմակողմություն և մտածել էր տալիս. որ ար-  
վեստի ոչ մի տեսակի մեջ ձևի հասկացությունը այն  
կարևորությունը չունի, ինչպես արձանագործության  
մեջ: Եվ ձևի ծավալային պլաստիկությունը այնքան  
զգալի, շոշափելի, մարդուն այնքան մոտ, «մարդամոտ»  
չէ, ինչպես քանդակի մեջ, յնդ մույն՝ «կողմ չունեցող»  
կլոր քանդակի մեջ:

Եվ ապացույցի կարիք չունի, ապացուցել, երկնել են  
հույները, և վերածնել են Վերածնության հանճարները՝

Վերոքիմ, Դոնաթելոն, Միքելանջելոն: Եվ խախտվեց ֆորմայի ձուլածո ծավալային պլաստիկությունը՝ չի լինի քանդակ, կլինի քանդակի իմաստը տարրալուծող մյուս ժանրերի նմանություն»:

Արվեստում հրաշքը ծնվում է, երբ տաղանդը և վարպետությունը զուգորդվում են ներքին խառնվածքին: Աներկբա կարող ենք ասել, որ ոչ միայն Լևոն Թոքմաջյանը կենդանի «տարեգիրք» է քանդակագործության մեջ, նաև հսկայական տքնությամբ հղկել է իր ներկապակը:

Նկարչի ջրանկարները վկայում են նրա նուրբ հասկացողությունը ջրաներկ նկարչության (ակվարելային) առանձնահատկության մասին: Նկարիչ Թոքմաջյանը կարողանում է նրբորեն վերարտադրել տեսարանը, արևային պայծառ լուսավորությունը և օդային տարածությունները: Թեթև ու թափանցիկ ներկված նրա բնանկարային ստեղծագործությունները արտահայտում են գունագեղ բնության, դաշտերի, լեռների գեղեցկությունները:

Արդիական կերպարները որոշակի դրսևորվում են նկարչի թեմատիկ բնանկարների պատկերաշարքում: Նրա ստեղծագործությունները հարուստ են իրենց պայծառ գունային ներդաշնակությամբ և գուներանգներով, իսկ դիտողի ուշադրությունը գրավում են նրբությամբ ու ճաշակով: Ներկի բարակ շերտի թափանցիկության և փափկության ճիշտ օգտագործման շնորհիվ արվեստագետը հասնում է մեծ արտահայտչականության: Նա օգտագործում է լուսային և գունային նրբերանգության հասնելու ջրաներկային նկարչության տված հնարավորությունները, նրա ներկերի թափանցիկությունը հայրենի բնության և մեր կյանքի բազմազան կողմերը բանաստեղծորեն պատկերելու համար:

Նրա նկարներում կան և՛ թախիծ, և՛ վիշտ, երբ նկատել է հարազատ ժողովրդի աննախադեպ աղետներն ու ավերածությունները, հույսերի ու սպասելիքների դրամատիկ ու ծայրահեղ լարվածության հասնող այնպիսի վիճակներ, որոնք իրենց մեջ փաստորեն խտացնում են այն ամենը, որ ընթացել է Հայկից մինչև Մաշտոց, 1915 թվականից մինչև 1988 թվական, և ջիմջ ուրախություն, երբ բարձրաբերձ լեռների վրա ծագում է արևը: Վերջապես կա և կարոտ ու մորմոք, երբ նկարում է Արարատ, որի ձյունածածկ գագաթից հույսեր, երագներ է մաղվում աշխարհասփյուռ հայի հոգում:

Թոքմաջյանի «Մայրություն» նկարը աչքի է ընկնում ջրաներկային նկարչության առանձնահատկությունների խոր զգացողությամբ, որի մեջ կյանքի հավերժ շունչն է բարբախտում, որից դիտողի սիրտը արձագանքում է ցնծագին երկյուղով, անհունի զգացողությամբ:

Վաթսունիինգամյա կյանքում Թոքմաջյանը ստեղծեց ինքնատիպ մի արվեստ, որը հասու է այսօրվա էությանը, հասու է ժամանակակից մարդու աշխարհին և մտածողությանը: Նա չկրկնեց հինը և չներփակվեց սեփական նեղ, քարացած աշխարհում, այլ մարմնավորեց խորապես մարդկային ապրումներ, մտատիպարներ և երազանքներ: Թերևս սրանով պետք է բացատրել կենդանի, շնչավոր քանդակների գաղտնիքը, ինչպես նաև չարժեքյունից զերծ մարդկային կերպարները: Նրա համար միևնույն է, թե ով է բարության տերը՝ մտավորական, հոգևորական, արքա, թե պարզ ծաղկավաճառ կամ մի կույր երաժիշտ, ճիշտ ու բարի քանդակներով, ջրաներկով, զծանկարներով փառաբանում է մարդուն ու մարդկայինը:

Թոքմաջյանի ստեղծագործությունները միշտ էլ եղել են քննադատության ուշադրության կենտրոնում: Նրա արվեստի մասին եղել են և՛ ուշագրավ դիտողություններ,

և՛ ծայրահեղ կարծիքներ: Հանիրավի քննադատվել են նրա ժողովրդականություն և համբավ վայելած քանդակները: Նրան տեղին ու անտեղի մեղադրել են անկատարության, կեղծ ժողովրդականության մեջ: Որոշ նորեկուկ «տեսաբաններ» քարկոծել են նվիրված հայրենասեր, տաղանդավոր մարդուն, որն իր հպարտ նախնիներից ժառանգել է հոգու նախասկիզբ մաքրություն, շիտակություն, համառ, աննահանջ կամք:

Բամբասանքը, չարախոսությունը նախանձի հետևանք է, քանզի Լևոն Թորմաջյանը Հայաստանից մինչև Եվրոպա ու Ամերիկա հռչակ վայելեց և ուր էլ գնաց՝ վերադարձավ վաստակած համբավով: Նա իր դափնիները, մեդալները և շնորհները հնձել է առատ, և գրչի դրվատալից յուրաքանչյուր հողվածը ներկայի համար անգնահատելի վկայություն է, իսկ ապագայի համար՝ հիշարժան փառաց կոթողներ:

Մենք շրջապատված ենք Թորմաջյանի գեղեցիկ արվեստով: Հաճա՞խ ենք նկատում այդ գեղեցիկը:

Այսօր էլ վաթսուհինգամյա արվեստագետը ստեղծագործում է (ի հեճուկս չարամիտ նախանձողների), քանզի հնարավոր չէ սպանել հոգին, որ գաղափարի ճշգրիտ արտահայտությունն է:

Նրա խանդավառ հայրենասիրությունը, արվեստը, նուրբ ու խոր ընկնալելու բացառիկ էությունը ծնունդ կտան նոր կերպարների ու գաղափարների, որոնք մեր ժողովրդի անկատար երազների մարմնավորումն են՝ Արամ Աշխարհակալի տեսլականով, որին սպասում է ազգը: Գուցե այդպե՞ս է կոչվելու նրա հաջորդ քանդակը՝ որպես իր ճշմարտության քարե ապացույց:

## ՃՇՄԱՐԻՏ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ ՏԻԵԶԵՐԶԻ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆՆ Է

Ով առիթ է ունեցել այցելելու քանքարաշատ քանդակագործ Լևոն Թորմաջյանի արվեստանոցը, կարող է վկայել, որ այն ավելի շատ նման է խայտաբղետ շինարարական հրապարակի. ոտքդ ներս չդրած՝ զգում ես նկուղի գաղջ օդը, նկատելի են պատին հենած փայտերը (ծառայում են պատվանդանների, հարթակների, աստիճանների համար), աշխատանքային գործիքները, իսկ երբ ներս ես մտնում, փնտրում ես ոտնատեղ, որպեսզի չընկնես գաջով կամ կավով լցված տաշտերի մեջ: Սակայն այդ միայն առաջին հայացքից, քանզի հաջորդ իսկ վայրկյանից սպասվում է առեղծվածային ու աստվածային զգացումների, ստեղծագործական բռնկումների մտքի պայծառացման եզակի մի խառնարան, երբ կոշտ նյութը, նախապատրաստվածքը, քառսն աստիճանաբար վերածվում է արվեստի հրաշքի, կանոնավորության:

Թորմաջյանի միջնորդությամբ հասու ես դառնում աշխարհաճանաչման, գիտական, փիլիսոփայական, կրոնական մտահայեցման: Քանդակագործն ավելի լավ մոդել չէր կարող գտնել, քան համատարած բնությունը, որը նրա ստեղծագործություններում դառնում է ժամանակ ու տարածություն, դառնում է անվախճան սկիզբ ու գոյի անկասելի փառաբանում:

Ոչ թե անորոշությունից, այլ իրականությունից է ծնունդ առնում ու պատկեր առ պատկեր ամբողջանում արտահայտչական միջոցների նրբությամբ ու ներդաշնակությամբ իմաստավորված արարումը՝ ուշադրությու-

նը բևեռելով մարդու ապրումների, զգացումների, խոհերի հորձանուտը, ինչպես և պատկերելով բնության կենդանի շարժումները, որտեղ բուն նպատակը՝ անձնավորված մարդ էակի ինքնաճանաչումն է: Այդ են վկայում արվեստանոցում տեղ գտած բազմաբովանդակ ու տարաճուն քանդակները՝ սկսած աշխարհի ստեղծումից մինչև մեր օրերը, որոնցից յուրաքանչյուրն աշխարհաստեղծման նախնական քառսը վերաձևում է կանոնավորության: Կոշտ նյութը թաթախվում է տիեզերական շնչով, ձեռք բերում նրբին ձևեր: Դրանք սոսկ անհատների կերպարներ չեն, թեև, քանդակված լինելով բնօրինակից, կրում են բնականի առանձնահատկության կնիքը:

Ջարմացած, հիացած նայում ես հատակին, ինքնաշեն սեղանին, լուսամուտագոգին անկանոն շարված բրոնզե, գիպսե, քարե, մույնիսկ պլաստիլինե արձանների, որոնցից յուրաքանչյուրում համով-հոտով, ուրախ-տխուր կյանքի մի նովել է...

Քարացած կանգ են առնում արտասվող կնոջ քանդակի առջև, որի արցունքները խորքից են բխում, ու թվում է՝ նա, մոռացած իր վիշտը, ուզում է արցունքներով սրբել հարազատ ժողովրդի ծով տառապանքները: Ուրբան թախիժ ու ողբերգություն կա այդ հասարակ, արտաքուստ ոչնչով աչքի չընկնող հայուհու դիմագծերում:

Նրա հետ հուզվում եմ և ես: Մի տխուր ալիք է բարձրանում, ողողում էությունս: Ինքնամոռաց՝ ոտքերս ծալվում եմ: Արտասվող կինը Հայաստան աշխարհին է կարծես՝ Անիով, Կարսով, Սասունով, Մուշով, Վանա ծովակով: Հոգուս խորքում անմեղ մեղավորի տառապանքն են ապրում: Այդպես Երևանի «Արմենիա» հյուրանոցում ամերիկահայ մեծահարուստ բարերար Քրքորյանը իր դիմաքանդակի առջև ծնկածալ բացականչել է. «Very good» (հրաշալի է):

Անշուշտ, մեծահարուստ մեր հայրենակիցը ծնկի է իջել արձանագործ Լևոն Թոքմաջյանի արվեստի ու տաղանդի առջև:

Այո, քանդակելը սրբազան արարողություն է, ինքնահրկիզում, «մենավոր պատարագ», որ քանդակագործի համար հատուկ խորհուրդ ունի: Եվ այդ «խորհուրդ խորհիմը, անհաս «ամսկիզբն» զգում եմ նրա Կոմիտասին նվիրված քանդակներից հնչող երգերում. խորությամբ, ներքին պարզությամբ, գեղեցկությամբ մեղմիկ շոյում եմ ականջդ «Ամտունին», «Կռունկը», «Հորովելը»:

Նույնքան խոսում է Կարինեի դիմաքանդակը, որն այն ի բնե պարկեշտ կանանցից է, որոնց առաքելությունը մնան է Աստծո օրհնության կյանքի պղտոր ջրերում:

Լևոն Թոքմաջյանը դասական ոսկելույս հորիզոններից սնված դիցապաշտ է, որը կնոջ մարմինը սիրո տաճար դարձրած՝ լուսաթաթավ նրա մերկությունն է աստվածացնում:

Արվեստանոցի ուշագրավ ստեղծագործություններից է Արամ Խաչատրյանի քանդակը: Կոմպոզիտորը պատկերված է հոգեկան բարդ վիճակում՝ դիրիժորական փայտիկը ձեռքին: Նրա դեմքը լարված է, մկանները՝ ձգված: Կարծես հնչում է նրա հերոսական երաժշտությունը: Դիմագծերի կատարյալ մնամության հետ քանդակագործը մեծ վարպետությամբ վերարտադրել է նրա հուզումնալից ներաշխարհը: Այստեղ ևս քանդակագործին հետաքրքրել է ոչ թե անձնավորության սովորական, խաղաղ վիճակը, այլ բուռն ոգևորության, ստեղծագործական գործունեության փոթորկալից պահը: Ջգացվում է, որ նա ղեկավարում է նվագախումբը՝ լարված հետևելով երաժշտությանը: Նրա դեմքի և վզի մկանները նկատելիորեն լարված են, ուշադրությունը կենտրոնացած է ոչ թե որևէ կետի, այլ լսողության վրա: Նրա մկանուտ, դուրս ընկած այտուկներով դիմագծերի շարժումը

զգացնել է տալիս դիտողին, որ նա ամբողջապես կլանված է նվագով: Քանդակում վերարտադրված է ստեղծագործելու ինքնամոռաց պահը, որը ոչ միայն ինքնաճանաչում, այլև ինքնահրկիզում է, քանզի այլ կերպ արվեստի մնայուն գործեր չեն ծնվում: Թոքմաջյանը տասը տարի աշխատում է «Արամ Խաչատրյան» հինգմետրանոց հուշարձանի վրա և հույս ունի, որ մեծ երգահանի ծննդյան հարյուրամյակին՝ 2003 թվականին կտեղադրվի Մոսկվայում՝ նրա անունը կրող փողոցում:

Ոգևորության այդպիսի պահերը, որոնք հասկանալի ու հարազատ են նաև իրեն՝ քանդակագործ Թոքմաջյանի խռովահույզ հուզում, կենդանություն են հաղորդում կերպարին: Քանդակագործը գիտի, որ իսկական ստեղծագործությունը երաժշտի մեջ առաջացնում է ոգևորություն ու ինքնամոռացության հազվադեպ պահեր, որոնք միշտ չէ, որ կարող են կրկնվել: Այդպիսի ոգևորության պահերին ստեղծվում են ոչ միայն արվեստի տիպական ու տիպար գործեր, այլև լիովին դրսևորվում է արվեստագետի խառնվածքը, նրա անհատականությունը:

Ընտրելով երաժշտի ստեղծագործական այդպիսի պահ՝ Թոքմաջյանին լիովին հաջողվել է վերարտադրել ոչ միայն Արամ Խաչատրյանի, այլև աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրի քանդակը, որը, Թոքմաջյանի բառերով ասած, մի ոգեշունչ «շանսոն» է: Քանդակը երգում է, ասես լսվում է Ազնավուրի հնչելո ձայնը, երգում է Սայաթ-Նովա: Եվ նա կարծես ոչ միայն երգում է, այլև ունկնդրում է հենց իր երգին:

Արվեստանոցը հետաքրքիր է ոչ միայն դիմաքանդակներով ու բարձրաքանդակներով, այլև ծանոթանում ես նրա գրաֆիկական ու գեղանկարչական աշխատանքներին:

«Տպավորությունների գրքում» կարող ես հանդիպել խռովահույզ ապրումների ու ներհուն մտորումների պա-

տառիկների, որով տարբեր մասնագիտության ու ճաշակի տեր մարդիկ փորձում են թարգման ու միջնորդ լինել արարչագործության և մարդու միջև:

Ազգային հպարտություն ես ապրում, երբ կարդում ես իսպանացի քանդակագործ Պաբլո Սերանոյի անկեղծ խոստովանությունը. «Եթե ցանկանում եք իսկական քանդակագործություն տեսնել, պետք է գնալ Երևան: Այն արվեստանոցը, ուր այժմ գտնվում եմ ես, ինձ երջանկացնում է: Քանդակագործ Լևոն Թոքմաջյանն իսկական արտիստ է: Նա օժտված է հնչել և ուժեղ զգացումներով, քնքուշ և երաժշտական տրամադրություններով: Ինչ որ տեսա նրա գործերից թե՛ քաղաքում և թե՛ այստեղ, ինձ ներշնչեցին ազգային ու համամարդկային գաղափարներ»:

Մրտի խոսք է ասել նաև ֆրանսիացի դաշնակահար, հայագետ Պիեռ Բարբիզեն. «Ես և իմ կոլեգաները անչափ ուրախ և երջանիկ կըզգանք մեզ, որ հնարավորություն մը ունեցանք լինելու Ձեր ստուդիո մեջ: Դուք հանճարեղ արձանագործ ըլլալեն դուրին և հաճելի անձնավորություն մըն եք: Ձեր գործերուն մեջ կըհոսի մարդկային ամենաքնքուշ արյան շիթեր: Միևնույն ժամանակ հուժկու, առնական ու հերոսական են Արամ Խաչատրյանը և Մարտիրոս Սարյանը: Արամ Խաչատրյանի բյուստին մեջ Դուք փայլում եք Ձեր տաղանդով»:

Իսկ 1992 թվականին մեր հայրենակից, աշխարհահռչակ նկարիչ Գառզուն ֆրանսիական «Ֆիգարո» թերթում տպագրել էր. «Հայաստանում ապրում և ստեղծագործում է տաղանդավոր քանդակագործ Լևոն Թոքմաջյանը: Փայտի, քարի նկատմամբ նրա զգացողությունն անսահման է, ձեռքն/ամուր է, հոգին և միտքը գործում են համատեղ: Ես հիացած եմ նրա գործերով»:

Գեղեցիկի ծարավը ներքին անկասելի պահանջ է, հենց որի շնորհիվ իմաստավորվում է ու արժևորվում թե՛

ստեղծագործող անհատը և թե՛ ստեղծագործությունը: Մա է թերևս, որ մարդուն մոտեցնում է Աստծուն: Բայց նույնքան անհրաժեշտ է, որ մարդը կարողանա մարդուն մոտենալ:

Իզուր չի ասված, որ մարդկանց ընդունում են արտաքինով և ճանապարհում ներքինով: Կերտված գեղեցկություն է Թոքմաջյանի արվեստանոցը, մարդու և մարդկային լուռ, բայց խոսուն հոգու մառան-գանձատուն:

Ավաղ, միշտ չէ, որ կարողանում ենք արժանին հատուցել հավերժի ճամփորդներին, որոնք մեր կողքին են:

Հոգիս ճնշում է Վահրամ Փափագյանի հանճարեղ միտքը. «Մեր ժողովուրդը գիտի մեծեր ծնել, մեծերին արժանավայել թաղել, բայց զորավոր ուսեր չունի նրանց պահելու»:

Երևի թե «զորավոր ուսեր» ունենալու համար նաև զորավոր հոգի պետք է ունենալ:

## «ԿԱՆԳ ԱՌ, ԱԿՆԹԱՐԹ, ԱՀԱ ԳԵՂԵՑԻԿԸ»

Ով թերթել է հայ ժողովրդի պատմության հուզաթաթավ էջերը, ծանոթ է նրա տխուր և փոթորկալից անցյալին, հասկանում է, թե մեր այսօրվա իրականությունը վերածնունդ է՝ ամուր կանգնած իր հավատի և ավանդույթների պատվանդանի վրա, ձեռքում բարձր ու հպարտ բռնած Մայր Աթոռ ս. Էջմիածնի պանծալի 1700-ամյա դրոշմը: Եվ այդ դրոշի միավորող խորհուրդը, որը իր մեջ ներառում է զգացում, գաղափար, հոգեկան միավորիչ անհրաժեշտություն, որ աշխարհասփյուռ մեր հայրենակիցներին առաջնորդում է Հայաստան: Յուրաքանչյուր հայի համար հոգեկան մեծ պահանջ է ուխտի գնալ ինչպես ս. Էջմիածին, որը հայ ժողովրդի հավատի պոռթկումն է դեպի երկինք և հանճարի հաշտությունը աստվածային բացարձակ ու գերակա իմաստության հետ. «Բերկրութիւն մօրն՝ է որդովք յիրաւի», այնպես էլ Օշական, որը հայության ներկայությունն է հայոց հողի վրա հաստատ, ինչպես Մասիսը ապրող ներշնչում յուրաքանչյուր հայի մեջ:

Իմ հիշողության մեջ անջնջելի կմնա 2001 թվականի սեպտեմբերի տասնուրեք. սփյուռքահայ բանաստեղծուհի Անուշ Նազգաշյանի հետ ուխտի էինք գնացել Օշական: Ով կարող է չհիանալ կամ անտարբեր մայել հրակարմիր տուֆով պարսպապատված ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կանաչապատ, ճաշակով բարեկարգված բակը, որտեղ տիտանական հայացքով չինարի ծաղի տակ կանգնած է Մեսրոպ Մաշտոցի դեղնագույն տուֆից կերտված

քանդակը, որի հայացքում նստած է հարազատ ժողովրդի 3000-ամյա պատմությունը:

Առաջնորդանիստ Օշականին պատմական արժեք է հաղորդում վերանորոգված ու բարեզարդված դպրատունը, առաջնորդարանը, որն իրականություն դարձավ եկեղեցական, կրոնական նշանավոր գործիչ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի ջանքերով:

Ինչո՞վ դու կհաղթահարես այն ամենը, ինչը ցավում է քո մեջ, ինչն այրում է հոգիդ: «Արարելով ու տեսիլքներ կերտելով, — պատասխանում է Նավասարդ սրբազանը և ավելացնում. — այս դպրատունը մերուպացած հուշակոթող է, որ կերտվել է մեր երազներից ու խոկումներից, մեր անքուն օրերի խոնջանքից»:

Սրբազան հոր խորհրդածությունները ընդգրկում է և ենթակա չէ պարզ վերլուծության. մաքրամաքուր են ինչպես խոստովանությունը, ինչպես աղոթքը: Այն խորքային ու տարածական է, որ թել-թել հյուսվել է անարատ զգացմունքներով ու հավատքով և դարձել գործունեության հավատամք: Սրանով չէ՞, արդյոք, պայմանավորված Նավասարդ սրբազանի բեմական առիւնքնորությունը, հավատացյալի վրա ներգործելու մոգական, հոգեթափանց ուժը, որի համար եկեղեցին աղոթատուն է, ժողովուրդը՝ լուսո խորան:

Այո, Օշականը լուսավոր ու խոստումնալից հանգրվան եղավ Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ սրբազանի գործունեության ճանապարհին, որի համար մշտատև խորհրդի ու գործի ներշնչման աղբյուր հանդիսացավ ս. Մեսրոպի շիրիմից ցոլացող աստվածային գիտության ու հանճարի լույսը: Այդ լույսն էլ բանաստեղծուհու մոտ արթնացրեց կուտակված կարոտներ, հույզեր, տենչեր, որոնք մարմնավորվելով գիտակցության լույսի ավազանում, ալեկոծեցին նրա բովանդակությունը: Իսկ ս. Մեսրոպ Մաշտոցի հանճարի պոռթկու-



Լևոն Թոքմաջյանը Նավասարդ սրբազանի հետ:

մը հասկանալու համար պետք է շրջել Նավասարդ սրբազանի մտահղացմամբ ստեղծած դպրատան ցուցասրահներով:

Միշտ երազանքները ավելի գեղեցիկ են, քան նրանց մարմնավորումը, երբ ոգեղինացած նյութն անցնում է մարդկային հոգու շավիղներով: Թերևս այս կերպ կարելի է մեկնել ճարտարապետական այն գեղեցիկ ճառագայթումը, որ Նավասարդ սրբազանի բարոյական և հոգևոր նկարագրի, նրա դեպի բարիի, գեղեցիկի և ճշմարտության ձգտումների ինքնատիպ հենքն է կազմում: Նավասարդ սրբազանը իր հոգեկան բավարարվածությունը և ուժը ստանում է հավատի ու արվեստի՝ երկու զորեղ հոսանքների միախառնումից: Ահա այդ ապրումներով նա հրավիրում է Եվրասիական միջմայրցամաքային միջազգային գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, միջազգային քանդակագործների մրցույթների դափնեկիր, ակադեմիկոս, քանդակագործ Լևոն Թոքմաջյանին Օշական, որպեսզի քարի միջոցով շունչ ու մարմին հաղորդի հանճարեղ մտածողի կերպարին:

Անսալով իր հավատամքին՝ Թոքմաջյանը արարչագործ բրիչը ծառայեցնում է գեղեցկության, արվեստի թագավորության կերտմանը: Այդպես հայ ժողովրդի անցյալն ու ներկան Թոքմաջյանի բրիչի տակ դառնում են թախծալից, ոգեշունչ, զուսպ կրքով ու գեղեցկությամբ առինքնող քանդակներ: Դիտելիս ինչ խռիւր ու հուշեր ասես, որ չեն արթնանում մարդու հոգում: Դպրատանը հավաքված արվեստի ցուցանմուշները դիտելիս զմբեթարդ դահլիճում հայացքդ զամվում է երեքմետրանոց արձանախմբի վրա: Կանգ առա արձանախմբի առջև և հարցական մայեցի Անուշին: Սրբազան ինչ ապրումներ համակեցին այդ քնքուշ կնոջը, որ ասաց. «Ուզում եմ գոչել. «Կանգ առ, ակնթարթ, ահա գեղեցիկը»:

Արդարև, այդ բացականությունը հասցեագրված էր հայ ժողովրդի խղճմտանքը աստվածային աղբյուրին կապող արձանախմբի հեղինակ քանդակագործ Լևոն Թոքմաջյանին:

Արվեստագետ բանաստեղծուհին երկար դիտելուց հետո խոստովանեց. «Այս մեկը՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն է, որը մարմնավորում է Սահակ Պարթև կաթողիկոսին, մյուսը՝ Նավասարդ սրբազանն է՝ Մեսրոպ Մաշտոցի կերպարում, իսկ երրորդը...»: Երրորդը Վռամշապուհ արքան է, ինքը՝ հայ ժողովուրդը:

Այդ պահին մտովի վերհիշում եմ, թե ինչպես տարիներ առաջ երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսը, երբ այցելել էր դպրատուն, նայել էր արձաններին ու բացականչել. «Ասիկա ես եմ»:

Արձանների հագուստներից, հայացքներից զգում ես նրանց դասակարգային պատկանելությունը: Քանդակների հայացքներում բանականության աստվածային լույսն է, որոնք կենդանի կերպար դարձած՝ խոսում ու պատմում են այնպիսի հույզով ու ջերմությամբ, որ դիտողի սրտում ծորում են լուսավոր ու ջինջ շիթերով:

Թոքմաջյանի քանդակած մարդը ճշմարիտ մարդն է ու Մեծ հայը: Քանդակագործը բարեխղճորեն վերարտադրել է դիմա-գծերի մանրամասները: Աչքի զարնոդ քիթը, թավ հոնքերի տակ լայն բացված աչքերը առնական դիմագծերի հետ ներկայացնում են ծանրաբարո, հարուստ խոհի տեր հայ կերպար, որը տիպական է, համոզիչ ու ճշմարտացի և նույնքան իրական է, որքան և կենդանի: Նրա ինքնաբավ արտահայտության մեջ քանդակագործը դրել է որոշ խստություն, որն արտացոլում է կերպարի ներքին ուժեղ բնավորությունը:

Հետաքրքիր է Սահակ Պարթևի կերպարը: Ամենայն հայոց հայրապետը կաթողիկոսական տարազով է. հայի տիպաբանական քիթ, բարձր և խոհուն ճակատ, իսկ աչ-

քերը փայլում են ազնիվ կենսուրախությամբ. դրանք մտածող ու որոնող աչքեր են: Քանդակի նրբակերտ լեզվով իր դրսևորումն է գտել Թոքմաջյանի կերտած Վռամշապուհ արքայի դիմաքանդակը, որին անդրիագործը հասել է բերանի բացվածքը փոքր-ինչ աղեղնաձև և աչքերի բացվածքները լայն ու խոր խոռչների ձևով պատկերված:

Կախարդված արձանախմբով՝ արվեստագետ Անուշի ուշադրությունը ճյուղավորվում է, որովհետև քարակերտ պատմությունը շարունակվում է:

Թոքմաջյանի աստվածատուր բրիչը քանդակել է նաև Մեսրոպ Մաշտոցի հուղարկավորության տեսարանը: Այստեղ ևս Թոքմաջյանը խորացել է դարերի մեջ՝ իր զարմանալի զգացողությամբ ու արվեստով: Այս արձանախմբում երկու էությունները՝ աստվածայինն ու մարդկայինը, մերձենում են, գրեթե միաձուլվում: Մեծանուն իշխան Վահան Ամատունին՝ հայոց հազարապետը և երկրի ավագանին ձեռքերի վրա են տանում այն հանձարի աճյունը, որը հայոց հողի վրա ծաղկեցրեց բյուրազանգ մտքի ու հոգու դալար պարտեզները: Իսկ առջևից գնում է հայ ժողովրդի ապագան խորհրդանշող մանուկը, որի ձեռքում հուսո խաչն է:

Քանդակը քարսիրտ մարդուն անգամ հուզում է և վարակում խորհրդով:

Թոքմաջյանի տաղանդին և ճաշակին պատիվ է բերում նաև բակում տեղադրված Մաշտոցի արձանը, որից ուղղակի հորդում է խոհը, լույսը, սերը: Քանդակագործի բոլոր ստեղծագործություններում բարության լուսավոր նույն հոգին կա: Գուցե սրբազան հրաշքի գաղափարը մտատիպարի գերազնայն երազանքն է որպես տեսիլք, իսկ գիտակցությունը մտատիպարի է վերածում խոր զգացումները:

Թերևս այս ապրումներով էլ ծնվեց նրա աստվածաշնչյան քեմայով քանդակված արձանախումբը, որը պատմում է Նոյ Նահապետի ժամանակաշրջանից մինչև մեր օրերը: Թոքմաջյան արվեստագետը չնոռացավ նաև անեղծ արմատներին կարոտով լցված դպրատան բարերարին՝ չիկագոյաբնակ Ջիվան Կոբոյանին: Նրա մեղմ, հանգիստ դեմքի արտահայտության մեջ քանդակագործը մարմնավորել է բարեհոգի անձնավորություն:

Լևոն Թոքմաջյանը սպիտակ մարմարից կերտել է նաև Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի դիմաքանդակը, որտեղ աչքերի գեղեցկությունը համադրվել է խելացիության հետ: Այստեղ նա ելնում է այն սկզբունքներից, որ պատկերային քանդակագործության մեջ հիմնականը ճշգրիտ ձևերն են, քանզի մարդու դիմագծերի արտաքին մմանության մեջ արվեստագետը պետք է բացահայտի ներքին բովանդակությունը և ընդգծի կերպարային ոչ դյուրին հասանելի մտածողությունը: Նա երկար ժամանակ ուսումնասիրել է Նավասարդ սրբազանի ներաշխարհը, ինչպես արվեստագետն է խոստովանում. «Ոչ միայն նրա մտքի փիլիսոփայությունն է ինձ հուզել, այլև աշխատելիս ես խորապես համոզվեցի, որ գործ ունեմ ոչ սովորական մարդու և ոչ սովորական հոգևորականի կերպարի հետ: Արվեստապաշտ Նավասարդ սրբազանը հոգեկան բարեմասնություններ ունեցող ժամանակակից հայ մարդու խտացումն է, որ ես փորձեցի բացահայտել: Եվ արդյունքում ես հաղթեցի մարմարին, հաղթանակ սեփական անձի նկատմամբ»:

Նավասարդ սրբազանի դիմաքանդակում Թոքմաջյանը դրել է ջերմ սեր ու ազգային հպարտություն, որը փոխանցվում է մեզ և մեր հիացմունքի, հարգանքի ու երախտագիտության առարկան է դառնում Օշականում

նրա տասը տարվա պատարագված կյանքը. կյանք, որը հավատի ու ինքնայրումի մշտավառ կերոն է:

Այդպես հոգևորականը և արվեստագետը իրենց սիրտը դարձրած արվեստի և հոգևորի զանգակ ու դողանջ՝ ըմբռնել են տիեզերական կեցության առեղծվածը, մերձեցել ճշմարտությանը և այն մարդկայնացրել, քանզի մարդուն վիճակված ամենագեղեցիկ ու խոր ապրումը խորհրդավորության ու վերերկրային զգացողությունն է, որը կրոնի և արվեստի փոխմիասնությամբ արարման կաթնաղբյուր է դառնում:

Երկյուղալի սքանչացման սարսուռը ներսումս վերադառնում եմ տուն:

Իմ տպավորությունների հուշերում մտապահված է Նավասարդ սրբազանի դիմաքանդակը. դեմքի այդպիսի արտահայտություն ունեցող մարդն անպայման լինում է բարի, մաքուր, ներքին տեսիլքով տարված, որի հայացքում կարդում ես այնքան սրտամոտ ու հարազատ ողջույնի խոսքը, որով դիմում է անժանոթ-ժանոթ բարեկամներին. «Բարև, ինչպե՞ս ես, լա՞վ ես»:

Եվ իմ մտորումները ընդմիջում է հեռախոսազանգը. Անուշն է: Ոգևորված օրվա տպավորություններից՝ խոստովանում է. «Չկարողացա անթաքույց հիացմունքս չասել Նավասարդ սրբազանին և զանգեցի ու որպես աղոթք մրմնջացի. «Օրհնվի այն արզանողը, որ քեզ մման զավակ է ծնել»:

Շարունակում եմ նրա միտքը. «Օրհնվի այն հողը, որ ծնել է Նավասարդ սրբազան, քանդակագործ Թոքմաջյան, նկարիչ Իսաբեկյան... Նրանց կյանքը մման է ասույի. ապրելով այրվում է՝ լուսավորելով իր շուրջը:

## ԾՆՎԱԽՄ Է ԿԱՎԻՅ, ԱՊՐՈՒՄ ՔԱՐԻ ՄԵՁ

Արվեստագետը հարազատ բարեկամի նման է: Երբ անձնապես հաղորդվում ես նրա ստեղծագործությանը, ասես նա ինքն է քեզ հետ խոսում՝ հուզելով, զգացմունքների անմիջականությամբ խորհել տալով, գուցե նույնիսկ քո խոսքին սպասելով, տաք ու անկեղծ շնչով հայտնելով քեզ իր ապրումները, մտահոգությունները, կյանքի գաղտնիքները:

Այսօրվա իմ բարեկամը քանդակագործ Լևոն Թոքմաջյանն է, որի մեջ այրվում է իր նախնիների ոգու հուրը, այն ոգին, որ գիտի անշունչ քարից կերտել կերպարներ, շիթ առ շիթ քարերի մեջ դնել իր հոգին, փոխանցել իր շունչը, ապրեցնել քարը՝ հյուսելով պատմություններ: Այդ շունչն ու ոգին նաև օգնում է նրան խորությամբ ըմբռնել արվեստը (գիտական, փիլիսոփայական, կրոնական) ու առաջնորդում Երևանի գեղարվեստի ուսումնարան: Գերազանց գնահատականներով ուսումը շարունակում է Գեղարվեստի ինստիտուտում՝ քանդակագործության մասնագիտություն բաժնում:

Շնորհաշատ և ուսումնատենչ երիտասարդը իր օրինաձիր երաժշտական կարողությունները փորձում է Երևանի պետական կոնսերվատորիայի վոկալի բաժնում: Ոչ միայն նկատում են նրա երաժշտական ընդունակությունները, այլև ավարտելուց հետո հրավիրվում է երգելու Հայաստանի պետական երգչախմբում, մեծահամբավ խմբավար Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ:

Հաջողությամբ զուգորդելով երգը և քանդակը՝ Լևոն Թոքմաջյանը հասնում է արվեստի բարձունքին: Ներքին խոր ու նուրբ շերտերով հարուստ է Թոքմաջյանի հոգևոր աշխարհը, մի աշխարհ, որն ունի իր օրենքներն ու սահմանները, իր ներքին տրամաբանությունը, կարգ ու կանոնը: Եվ այդ ամենը ոչ միայն նյութի ու իրականության բովանդակության յուրացման գեղարվեստական հարցերում, այլև քանդակագործության արվեստի դժվար ստեղծվող համակարգում:

Պարզություն, վեհություն, ձևերի զուսպ համաչափություն, ներդաշնակ, թեթև ու խիստ՝ ահա նրա քանդակագործության բնութագիրը: Ապշելու չափ պարզ և հենց այդ պարզությամբ էլ անկրկնելի, որոնք իսկապես եզակի հուշարձաններ են մարդու ձեռքով կերտված ոգեղեն արժեքների մեջ:

Որքան էլ զարմանալի է, նույնիսկ վիրավորական, որ երիտասարդ քանդակագործի տաղանդը հատկապես նկատեցին ու գնահատեցին օտար երկիրքների տակ: Քանիցս օտար պետական օրհներգերի հնչյունների տակ ցած են սահել հուշարձանը ծածկող սպիտակ պաստառները և բուռն ծափողջույնով, ժպիտով ու մրցանակներով ներկաների առջև հառնել է Թոքմաջյան քանդակագործի զարմացնող ու ոգեղինացնող տաղանդի արգասիքը:

Ահավասիկ, 1973 թվականին Պրիլեպ քաղաքում «Թռչող կոունկներ» մարմարե քանդակը արժանացավ առաջին մրցանակի և տեղադրվեց քաղաքի կենտրոնում: Ստեղծագործական երկար ճանապարհի ընթացքում Թոքմաջյանը իր աստվածապարզ և շնորհը կատարելագործեց, խորացրեց և ամրացրեց՝ հասցնելով հաստատուն և կայուն մի աստիճանի, որի թթմորը հայրենիքն է, ազգը և եկեղեցին հայոց: Նրա ստեղծագործությունները քննելիս՝ Թոքմաջյանի արվեստի դրսևորումնե-

րը պետք է դիտել ոչ թե անընդհատ զարգացման, այլ որպես իր կայուն սահմաններն ունեցող մի տարածություն, որի մեջ նրա որոնումների ուղին լայնացել, տարածվել է: Որքան զարմանալի, նույնքան էլ բնական է, որ Թոքմաջյանը 1975 թվականին սրբազան դոդով քանդակում է դարաբաղցի կնոջը՝ այնքան հմայիչ մի կին՝ ներկայացված ազգային տարազով: Ինչպիսի հպարտություն ու ցնծություն ապրեցին Լևոն Թոքմաջյանին բարի կամեցողները, երբ նրա «Ղարաբաղցի կինը» քանդակը Լեհաստանի Օրնսկ քաղաքում արժանացավ «Գրան պրի» մրցանակի: Թերևս այս քանդակով էլ սկսվում է Լևոն Թոքմաջյանի աշխարհընկալումը: Նրա բնատուր շնորհը պոռթկաց, շողշողաց մեծ արվեստի լուսատու զորությամբ: Ասվածի պերճախոս ապացույցն է 1981 թվականին Իտալիայի Ռավեննա քաղաքում, Դանտեին նվիրված բիենալեում, տաղանդավոր քանդակագործի՝ «Դանտեն և Վիրգիլիոսը դրախտի դռների առջև» քանդակի համար ստացած ոսկե մեդալը և քաղաքի պատվավոր դիպլոմը: Այդ բարձր շնորհաբաշխումին արժանանալու առիթով Իտալիայի նշանավոր քանդակագործ Ջակոմո Մանցուն պարզևր հանձնելիս դիպուկ բնութագրում է. «Լևոն Թոքմաջյանի արվեստը որքան դասական է, այնքան էլ ժամանակակից: Ահա այս սինթեզն է, որ նրան այսօր դասում է ժամանակակից նշանավոր քանդակագործների կողքին»: Թոքմաջյանը կարծես զգացել է տիեզերքի և մարդու ոգու ներդաշնակումը և իր համատեղ, համառ ջանքերով հասել այն քչերին մատչելի բարձունքին, որին «կատարելություն» անունն է տալիս մարդկությունը:

Թոքմաջյանի տաղանդի շնորհիվ հայ քանդակագործական արվեստը ցուցադրվեց նաև Դրոբդզստանի Բիշքեկ քաղաքում, որտեղ համամիութենական առաջին քանդակագործական սիմպոզիումում «Մայրություն»



Նոյ ճահապետ

մարմարե քանդակն արժանացավ առաջին մրցանակի: Հետագայում, Յունեսկոյի հովանավորությամբ, այս քանդակի հիման վրա արժանանում է ակադեմիկոսի կոչման: Անհատական զգացմունքների զեղման փոխարկումը պատկերվող կնոջ նկարչական արտացոլման ու քանդակային լուծումների՝ ստեղծագործությունը դարձնում է բոլոր կողմերից տեսանելի պատկեր-քանդակ, որի մեջ սակայն պահպանվում է կենդանի շունչն ու շարժումների ամբողջ գրավչությունը, որը ներքին, էական շարժում է մարմնացնում իր արժանային անշարժությամբ:

Նույն մարդու ձեռքով ու մտահղացմամբ կերտվում է նաև «Գործող կինը» քանդակը, որը Թբիլիսիում, Անդրկովկասյան երկրների կերպարվեստի բենալեում, 1986 թվականին արժանանում է «Գրան պրի» մրցանակի, որի մասին արվեստագիտության դոկտոր Ալեքսանդր Մորոզովը գիտնականին բնորոշ խղճով ու հիացմունքով ընդգծել է. «Մարմարի ոչ մեծ քանդակի մեջ Լևոն Թոքմաջյանը մարմնավորել է ուժեղ կամքի տեր կնոջ, որն իր զուսպ ծավալների մեջ արտահայտում է վիշտ, ցավ»:

Անցնում են տարիներ, նորանոր ատաղձներ կուտակում իր կոթողական աշխատանքների համար, և 1968 թվականին Երևանում սպիտակ մարմարից կանգնեցնում է «Մարտիրոս Սարյան» հրաշագեղ հուշարձանը, որն այլ տարբերակներով ու լուծմամբ Դոնի Ռոստովում (նկարչի ծննդավայրում) կանգնեցվեց բրոնզից: Պատահական չէ, որ անգուգական երգչուհի Գոհար Գասպարյանն արձանը դիտելիս հիացմունքով նկատել է. «Սարյանի արձանի յուրաքանչյուր ծալքի մեջ մի սիմֆոնիա է»:

Ահա այն մեծ իմաստության գաղտնիքը. այնտեղ, ուր լուծում է երգը, սկսվում է ճարտարապետությունն ու քանդակագործությունը: Ո՞վ չի հիացել Թոքմաջյանի կերտած «Մարտիրոս Սարյան» արձանով: Ոչ միայն մայ-

բաքադաքի բնակիչները, այլև օտարազգի հյուրերը հաճախ են կանգնում այդ արձանի առաջ ու հափշտակվում նրա գեղեցկությամբ: Մարյանի արձանը ազգի համար, որպես հանճարեղ նկարչի, ժողովրդի հարազատ զավակի իսկական կերպար է: Այդ ջերմ սիրո և մեծարանքի պատճառը ոչ միայն արձանի գեղարվեստական բարձր արժանիքներն են, որոնք գեղագիտական մեծ հաճույք են պատճառում, այլև մեկտեղում են մեծ նկարչի և նրա կերպարը կերտող տաղանդավոր քանդակագործի արվեստի ուժն ու հմայքը:

Լեոն Թոքմաջյանը կյանքի մարդ է իր արվեստում, որի անցած ճանապարհը զուգադիպեց հայ ժողովրդի պատմության դառն ու դաժան տարիներին: Սակայն նույնիսկ այդ խավար ու ցուրտ օրերին, երազի ու իրականության սահմանագծի խախտման մեջ, նա չկորցրեց ոգու զգաստության պահը:

Ավելորդ չէ հիշել, որ 1991 թվականին Կիպրոսում հայ մեծանուն գործչի տասնվեց քանդակագործական մարմարյա աշխատանքներ տեղադրվեցին (Գրիգոր Նարեկացի, Պողոս Նուբար փաշա, Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորենացի, Հովհաննես Այվազովսկի...): Այդ աշխատանքները Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի տնօրեն Հարություն Պզտիկյանը այսպես է բնութագրել. «Թոքմաջյանի քանդակները ինձ համար հուզմունք են»:

Արձանագործի աշխատանքներով հուզվում են ոչ միայն մեր հայրենակիցները, այլև օտարները: Այդպիսի ապրումներ և արցունքներ խլեց քանդակագործը 1993 թվականին Հունաստանի Ամարոսի քաղաքի կենտրոնում, երբ կանգնեցվեց հույն ազգային հերոս Սպիրոս Լուիսի հուշարձանը, իսկ 1994 թվականին Ֆրանսիայի Մարսել քաղաքի կոնսերվատորիայի մուտքի մոտ կանգնեցվեց կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի բրոնզե արձանը: Այս բոլորը քանդակագործի հոգու աստեղային

պահերի մնայուն, ապրող հիշատակներն են, որոնք կարծես ամբողջացնում են Թոքմաջյանի աշխարհը, որի մեջ իր իմաստավորված տեղն ունի յուրաքանչյուր քանդակ, որոնք ոչ միայն տվյալ անձի արտաքին կերպարանքի ու հոգեկան ուրույն աշխարհի հարազատ պատկերն են, այլև կրում են Թոքմաջյանի աշխարհագրություն, նրա փիլիսոփայական որոնումների կնիքը:

1996 թվականին Երևանի Արուսյան փողոցում կանգնեցվեց համամարդկային բարությունն ու խիղճը խորհրդանշող Կարապետի («Կարաբալա») բրոնզե քանդակը՝ ի հայտ բերելով հոգեկան աշխարհը մի մարդու. որ շատ բան է տեսել կյանքում, իր տրտմության միջից ժպիտով մայում է անխորտակ հավատով, թրծված հոգու վճռականությամբ, նույնիսկ երիտասարդ մնացած հոգու հանդարտությամբ ու ներշնչումով: Ի՞նչ է ապրում այս մարդը: Վիճտ, թե՞ ուրախություն: Նայում ես դեմքին ու մտածում, որ բոլոր ժամանակներում մարդկությանը պակասել է այդ մի կաթիլ բարությունը: Մի մեծ բարություն, որ վերածվում է երգի:

*Երբ քայլում եմ Երևանի Արուսյան փողոցով,  
Կարծես մեկը շնչում է ծերունազարդ իր ծայնով,  
Շուտ եմ գալիս, ու իմ կողքին Կարաբալան է կանգնել,  
Դողդողացող նրա ձեռքին ծաղիկներն են քարացել:  
Կարաբալա, Կարաբալա, ծաղկավաճառ ծերունի,  
Ծաղիկներիդ անուշ բույրը ոչ մի ծաղիկ դեռ չունի:*

Ու խորհում եմ, ե՞րբ է արդյոք, թե հոգու անպարագծելի գամմա՝ ի սեր արվեստագետի ու բնորդի:

1997 թվականին Երևանում կրկեսի մուտքի մոտ տեղադրվեց ժպիտներ չկարգևող ամենատխուր և ամենաուրախ մարդու՝ մեծ ծաղրածու Լեոնիդ Ենգիբարյանի բրոնզե քանդակը:

Վերջին տարիներին ամեն տեսակի կորուստներից հետո անհրաժեշտ է տոկոսություն, ապրելու կամք, և նա որոնում է կեցության մոր հիմքեր: 2000 թվականին Թոքմաջյանը իրականացրեց «Նոյ Նահապետ» և «Տիգրան Մեծ» արձանները, որոնք տեղադրվեցին մախազահական պալատի առջև: Ահա Նոյը, ահա Տիգրանը, երկու արձան՝ դեմ-դիմաց:

Արձանները դիտելիս միքելանջելոյական խստաբարո և մեծաշունչ մի ոգի ես զգում: Դրանցում մարդկային կեցությունն է խտացված, գոյի առեղծվածի, բարու ու չարի առեղծվածի խոկումներով, ամենամախնական ապրումներից մինչև փիլիսոփայական խտացումները: «Ծնվում է կավից, ապրում քարի մեջ» մենագրության հեղինակը Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանն է, որի տեսական ժառանգության մեջ հետաքրքիր է քանդակագործությանը նվիրված զանազան հարցեր, որտեղ դրսևորվել է սրբազանի անկողմնակալ, ուղղամիտ, անթաքույց վերաբերմունքը. «Լևոն Թոքմաջյանը ոչ միայն արտահայտում է իր ժամանակը՝ ամենաազնիվ մարմարը դարձնելով ոսկեպանակ-Սարյանի, այլև պատմում է անցյալը՝ աշխարհը նորից վերածնող ու վերակենդանացնող Նոյ Նահապետի անդրիով»:

Առաջին անգամ Երևանում, Հանրապետության Նախագահի մաստավայրի շենքի դիմաց կանգնեցվեց երեք մետր բարձրությամբ Նոյ Նահապետի մարմարե արձանը, որի հեղինակն ու կատարողն է տաղանդաշատ քանդակագործ Լևոն Թոքմաջյանը: Նոյը պատկերված է իր տապանից դուրս գալիս՝ ձախ ձեռքով բռնած այն աղավաղում, որը բերեց քարի լուրը, իսկ աջ ձեռքով՝ ձիթեմու այն ճյուղը, որը կյանքի վերսկսման խորհրդանիշն է: Նոյը շրջապատված է կենդանիներով, եղնիկ՝ իր ձագի հետ,

որը մոր կաթն է ուտում, շուն, իսկ ոտքերի տակ, բարու կողքին, չարն է՝ սողումը:

Ծերունագարդ Նոյի կերպարը խորհրդավոր է, իմաստուն և անչափ քարի: Խորն արտահայտչականությամբ է մշակված քարը և բարձր վարպետությամբ կերտված Աստծո հավատարիմ մարդու Նոյի դեմքը:

Իսկական արվեստը ստեղծվում է բնավորություններից և հոգիներից, որին հավատում ենք ու ընդունում իբրև ճշմարտություն, քանզի նա ոգեղինացած, բյուրեղացած, աստվածային շնչով օծված մի իրականություն է, որ մեզ ավելի մոտ է ու սիրելի:

Զգացմունքների և ճշմարտության ուժն է իշխում և հավատք ծնում Թոքմաջյանի «Տիգրան Մեծ» քանդակը, որը վերլուծում է «Էրեբունի» թանգարանի տնօրեն, պատմաբան Սուրեն Մալխասյանը. «Պատմական, իրական մի հզոր տիրակալի արձան է, որի հիշատակի ու կատարած գործերի առաջ գլուխ են խոնարհել և՛ բարեկամները, և՛ թշնամիները, իսկ այժմ, փառահեղ քանդակի առջև դարձյալ գլուխ ենք խոնարհում մենք՝ նրա հեռավոր հետնորդները: Մարմնավորված կերպարը խիստ մարդկային է, գրավիչ, արքայավայել կեցվածքով: Արքայից արքայի խաղաղ, խոհուն, հեռուն մայր ու վաղվա անելիքն իմացող հայացքով: Հարևան-թշնամի սողունները ոտքի տակ են առնվել, ոչնչացվել, նվաճված երկրների պետությունների առյուծ դիմադրությունը կոտրված է: Արքան իր հզոր մարմնով ու երկրով նստած է դրանց վրա, «Արքայից արքա» տիտղոսակիր հավերժության-իշխանության գայիտնը ձեռքին, կողքից այդ իշխանությունը պահող սուրը՝ կախ»:

Թոքմաջյանի արվեստը կյանքի առջևից է քայլում և լուսավորում մեր իրականությունը: Բացատրության կարոտ են մնում քանդակագործի շատ ու շատ գործեր: Իսկ

այս ակնարկը կուգե՞նայի ավարտել ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր Էդուարդ Իսաբեկյանի ընդհանրացնող դիպուկ ասությամբ. «Մեծ գնահատանքի է արժանի մեր ժամանակների լավագույն արձանագործի համառ աշխատասիրությունը, եռանդը, եթե նկատի ունենանք, որ առանց ֆիզիկական ջանասիրության չի կարող ստեղծվել, հաղթահարվել քարի դիմադրությունը: Թոքմաջյանն այն արձանագործներից է, որ վաղուց է սկսել «վիճել» քարի հետ, «կռվել» քարի հետ ու նաև փայտի, որը պակաս դիմադրողականություն չունի: Իր ամհատի շնորհքի բազմաթիվ հավաստիացումներն ունի Թոքմաջյան արձանագործը, մեղալներ, դիպլոմներ, մրցանակներ: Եվ այդ պարգևները տվել են հարավսլավացիք, լեհերը, հունգարները, իտալացիք, և տվել են Մանձուի ձեռամբ և... հայ քանդակագործի...»:

Ջակոմո Մանձու. «Ես միշտ հետևել եմ ժամանակակից քանդակագործության ընթացքին: Երբ զարգացումը գալիս է դասական մտածողությունից և միախառնվում ժամանակակից շարժում ձևերի հետ, ես այն ընդունում եմ: Լևոն Թոքմաջյանի քանդակները, լինի դա քար, բրոնզ, փայտ կամ մարմար ասածիս փայլուն օրինակներն են: Ես ողջունում եմ նրա հաղթանակը Դանտեի հայրենիքում»:

Բայց և ինչքան էլ հաճելի լինեին այդ պարգևները, մի տեղ նրանք կարող էին դառնալ հաճախ «գլխապտույտի պատճառ», «շագրենի կաշի» և կարող էին ամեն պարզևի հետ «կարճացնել» ամենասուղ, չճարվող բանը՝ համեստությունը: Բայց տես որ կարելի է այդ ամենն ունենալ և չմոռանալ, որ քայլում ես հողի, երկրի վրա և ոչ ամպերի, որ ճակատ ունես մարդու և բաց ճակատով պիտի մայես քեզ մման մարդուն, այնպիսին, ինչպիսին որ կա մեր Լևոնը: Արվեստագետին միակ ազնվացնողը այդ

դժվար ճարվող համեստությունն է, որի պարտադիր անհրաժեշտությունը դեռ մնում է և մնալու է ճշմարիտ արվեստագետի կոչման համար «առաջին» մախապայմանը: Լևոն Թոքմաջյանն այսօր էլ իր ուժերի ծաղկման շրջանում է, այն քչերից է, որոնցից մեր ժողովուրդը դեռ շատ սպասելիքներ ունի, ինչպես այգեպանը՝ իր տնկած ծառից»:

## ԲԱԶՄԱՆԻՍ ԵՆ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ ՉԻՐՔԵՐԸ

«Թոքմաշյան, ես հիացած եմ ձեր մեծությամբ, շատ եմ ցավում, որ ձեր անձի հետ ի վիճակի չեմ խոսել ձեր ներաշխարհի մասին, որը ծնում է այդքան հանճարեղ (անչափ մաքուր իրենց զգացմունքներով) գործեր: Ես ուզում եմ հավատալ, որ ապագայում ժամանակը և ձեր մեծությունը կապացուցեն, որ ձեր տեղը մեծերի կողքին է... Թեկուզ Ռոդենի... Ես պետք է հետևեմ ձեր ստեղծագործություններին մեծ հավատով: Ես կլինեմ ձեզ հետ. միայն պահեք ձեր զգացմունքների մաքրությունը (աղբյուրից էլ մաքուր): Եղեք ավելի մեծ, քան կար հիմա»:

1978 թվականին Մոսկվայում բացված ցուցահանդեսում իր ապրումներն այսպիսի խոսքերով է վավերացրել արվեստագետ Արարատ Ազարյանցը տպավորությունների գրքում:

Արդարև, խոշոր է Թոքմաշյանի դերը և նշանակությունը՝ որպես մոնումենտալ արձանային քանդակագործության ներկայացուցիչ, որն ստեղծել է մեր ժողովրդի ոգուն ու նրա գեղարվեստական պահանջներին համապատասխան հուշարձաններ և ճշգրիտ դիմաքանդակներ, որոնք նրբին սլացքով ու գեղարվեստական ցայտուն մտահղացումով հարստացնում են ազգային քանդակագործությունը և ընդլայնում նրա շրջանակները:

Սակայն նա հետաքրքիր ձեռքբերումներ ունի նաև գծանկարային արվեստում, որտեղ արտահայտել է մարդկային հոգու խորունկ գաղտնիքները, որ հաճախ մնում են քաքնված ձևերի միակերպության տակ: Առա-



ջին իսկ գծանկարներում կենսական և ներգործող լիցքեր է պարունակում Թոքմաջյանի արվեստը, որի ակունքը նախ և առաջ պետք է որոնել նկարչի խառնվածքի, մտածողության ու պատկերացումների մեջ, որը բացառապես հայկական է, քանզի նա ուսումնասիրել է հայոց դյուցազներգությունն ու պատմությունը, ծանոթացել ծաղկողների, գրիչների հմտությանը, լսել մագաղաթի շրշյունը: Նա իր գծանկարները կատարել է բնօրինակից՝ հիշողությամբ, երևակայությամբ: Գծանկարներում ծավալել է բարդ ու բազմազան թեմաներ, որոնց ընտրության և իրականացման բարդ ոլորտում ոչ թե իր վրա է բեռել, այլ աշխատել է իրեն մոռանալով՝ գործողության մեջ դնել առարկան, մարդուն, բնությունը: Դիմանկարների գծանկարներից յուրաքանչյուրը ներկայացնում է մի առանձին հոգեվիճակ:

Որպիսի ճարտարությամբ է պատկերել դերասան Վահրամ Փափագյանի դիմանկարը: Ուժեղ և համարձակ գծանկարը բարձրարվեստ ստեղծագործություն է, որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Դիմագծերի ծավալայնությունն ու դիմամիկան, արտիստի խոշոր, սևեռուն աչքերի խիստ արտահայտչականությունը գեղարվեստական համոզականությամբ վերարտադրում է ազդեցիկ կերպար: Լակոնիկ ոճով վերարտադրված են արտիստի հատկանշական, անկրկնելի դիմագծերը:

Համառ, երկարատև աշխատանքի ընթացում Թոքմաջյանը գծանկարում մշակում է յուրահատուկ լեզու ու պարզ ոճ: Մուր դիտողականությամբ որսալով մարդկանց ու շրջապատի առարկաները՝ իրենց բնորոշ առանձնահատկություններով, նա վերարտադրում է դրանք ամենայն ճշգրտությամբ՝ ձգտելով հասնել տիպականության: Ստեղծել է նաև գծանկարներ, որոնց մեջ երգիծանքի կամ հումորի որոշ տարրեր են հայտնա-

բերում, ինչը ավելի գրավիչ ու հետաքրքրական են դարձնում նրա ստեղծագործությունները:

Նա ստեղծել է մահ Հայաստանի բնության թեմաներով գողտրիկ մատիտանկարներ՝ առանձնակի ուժով շեշտելով գծի հստակությունը, նրա ռիթմն ու արտահայտությունը:

Ուշագրավ է կնոջ կերպարով պատկերված «Հավերժություն» գծանկարը. ժպտուն անմեղություն է, որը կարիք չունի հմայելու ծեփծեփումներով, քանզի ինքն ամբողջությամբ հմայք է:

Ինչպես մեկնաբանեմ կամ ինչ լեզվով պատմեմ Կոմիտասի գծանկարի մասին, որտեղ արտահայտված է հայ ժողովրդի նկատմամբ գործված ոճիրը: Կոմիտասի կերպարում նկարիչը մարմնավորել է մի ամբողջ ողբերգություն: Երգահանի հայացքը... Երգահանի մոայլ, մահ ցասում արտահայտող հայացքը լի է դրամատիկ ներգործությամբ: Որքան խոնարհ է դարձել նա իր ցավի մեջ: Այստեղ կերպավորման միակ միջոցը գիծն է: Առանց երանգավորման, սոսկ գծով նա կարողացել է ճիշտ որսալ մեծ Երգահանի դիմագծերը, կարծես տեսել է նրա անհատակ հոգին, աչքերից ծորացող տիեզերական վիշտը, իր գծանկարում հասնելով կենսական ճշմարտության և գեղարվեստական լեզվի պարզության: Գեղանկարչական արվեստի անստգյուտ մի գլուխգործոց է այդ դիմանկարը, որը կարելի է դնել Օգյուստ Ռոդենի գծանկարների պատվանդանին:

1968 թվականին «Ավանգարդ» թերթի խմբագրությունում կազմակերպված՝ Թոքմաջյանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսում այցելուները առիթ ունեցան տեսնելու և վայելելու նրա բազմաթիվ գծանկարները՝ հյուսված կարելիի և իրականի նշանաբան մոտիվներով:

Դավիթ Բեկ գծանկարում նկարիչը կարողացել է արտահայտիչ դարձնել իր մտահղացումը՝ հարազատ ժողովրդի հերոսական պատմության էջերից մեկը, և արտահայտել որոշակի տրամադրություն, որը և վարակում է դիտողին: Դրան նպաստում է մահ գծանկարի կոտ, միասնական կոմպոզիցիան, որի մեջ յուրաքանչյուր ֆիգուր գտել է իր բնական տեղը, լրացնում են միմյանց և ուժեղացնում են տպավորությունը: Նկարչի մտահղացման հստակությունը բազմաֆիգուր այդ հորինվածքին տալիս է գաղափարական արտահայտչականություն:

Իր բոլոր ստեղծագործություններում նա հանդես է գալիս որպես գծանկարի մեծ վարպետ, որտեղ զգում ես, թե արվեստագետը ինչպես է սիրում կյանքը, մարդուն, բնությունը:

Թոքմաջյանի գծանկարչական լավագույն ստեղծագործություններն աչքի են ընկնում գեղարվեստական մեծ ինքնատիպությամբ, հստակ են, պարզ և արտահայտիչ: Սերտորեն կապված լինելով հարազատ ժողովրդի ու նրա բազմադարյան մշակույթի հետ, շահագրգռված նրա զարգացմամբ՝ նա իր ստեղծագործության նյութ ընտրեց հայ մշակութային, քաղաքական նշանավոր գործիչների, ազգային հերոսների կերպարները և ժողովրդի պատմական թեմաները:

Դժվար է մի ակնարկի մեջ ներառել, պատմել ու սպառել արվեստագետի գծանկարների մասին, քանզի նրա բոլոր մտահղացումները ծնունդ են առնում գծանկարից և հետո դառնում քանդակ ու կոթող՝ վերակերտելով ու վերաիմաստավորելով ոչ միայն անցյալը, այլև ներկան:

Եթե ժամանակի չափման եռյակ միավորը խաբկանք է, քանզի իրականում գոյություն ունի անցյալ և ապագա, իսկ ներկան երևութական է, հետևաբար վստահ կարելի է ասել, թե Թոքմաջյան արվեստագետի պատմության

խորքերը պրպտելու փորձը գալիքը տեսնելու հեռավոր նպատակ է հետապնդում: Ուստի որքան հարուստ է մի ժողովրդի անցյալը, նույնքան պետք է խոստումնալից լինի նրա ապագան. սա է, թերևս, Թոքմաջյան արվեստագետի հավատքն ու սերունդներին մատուցած ծառայությունը:

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ԱՆՀԱՏԸ ԵՐԿՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ Է

«Տաղանդը խոսում է իր ժողովրդի հետ, հանճարը՝ համայն մարդկության»: Վիլյամ Շեքսպիրի այս միտքը անվերապահորեն կարող ենք ասել քանդակագործ Լևոն Թոքմաջյանի համար, քանզի նրա արվեստը դուրս է եկել հայրենի երկրի եզերքներից, տարածվել ու սեփականությունը դարձել օտար երկրների (Իտալիա, Ֆրանսիա, Հարավսլավիա, Հունաստան, Լեհաստան, Ռուսաստան...), արտերկրում արժանացել դափնիների ու մրցանակների: Մինչդեռ այսօր նրա արվեստը լրիվ ուսումնասիրելու, ըմբռնելու հնարավորություն չունենք, քանզի չկա այն գրականությունը, պատկերագարող ալբոմը, ստեղծագործությունների ցանկը, որ կարողանայինք ծանոթանալ Թոքմաջյան արվեստագետի համապարփակ գործունեությանը:

Ստեղծագործող անհատը երկրի ամենաթանկ հարստությունն է ու ճակատագրի պարզևր. ինչո՞ւ ենք մենք այսչափ անտարբեր ու անհոգ: Մի անորոշ, պղտոր տհաճության զգացում մեջս փորձում եմ ըմբռնել անըմբռնելիմ և մի ավելորդ անգամ հարցնել. ինչո՞ւ մինչև հիմա քանքարաշատ Թոքմաջյան արվեստագետի գործերի լրիվ ալբոմը չեն հրատարակել: Մեր գորշ կյանքում մի տարօրինակություն ևս, մի բարդույթ. կարող եմ ունենալ իտալացի քանդակագործ Միքելանջելո Բուոնարոտիի, իսպանացի նկարիչ Ֆրանսիսկո Գոյայի, ֆրան-

սիացի նկարիչ Նիկոլա Պուսսենի, ցանկացած օտար նկարչի ալբոմը, կարող եմ սեղանիս վրա հիանալ ռուս նկարիչ Անդրեյ Ռուբլովի հրաշալի սրբապատկերների բարձրորակ վերարտադրությամբ, բայց Թոքմաջյանի ստեղծած սքանչելի գործերի (քանդակ, գրաֆիկա, գեղանկար) ժողովածուն չունենալ:

Մի խորունկ թախիծ եմ ապրում, ափսոսանք՝ այն անհոգության համար, որ հաճախ պարտադրվել է մեզ և այսօր էլ շարունակվում է սովորույթի ուժով: Այդպես խեղաթյուրվում, ապականվում են մարդկային բարոյական մթնոլորտը, նույնիսկ այն սրբությունները, որոնք մարդկային խորագույն զգացումից են ծնվել: Մեր անհաշիվ ու անհատույց տառապանքները բթացած, պատեհապաշտ հոգիների կեղծավորության հետևանք է: Եվ ես վստահ եմ, որ հրճվանք, բերկրանք պատճառող Թոքմաջյանի արվեստը կփնտրեն բոլոր ժամանակներում, քանզի նրա ստվերում իշխում է այն կենարար, գեղեցիկ, լավատեսական երակը, որով պիտի համալրվի ու հարստանա համաշխարհային արվեստի պատմությունը:

Թոքմաջյանի արվեստում համադրված են բոլոր լավագույն այն բարեմասնությունները, որ Աստված արարման առաջին օրը շնորհեց մարդուն՝ զթասրություն, սեր, հանդուրժողականություն և երախտագետ խոնարհություն: Նա հետաքրքիր է առաջին հերթին իր անկրկնելիությամբ: Նրա ստեղծագործության բնորոշ չափանիշը, նախ, իր անհատականությունն է: Ասածիս վկայությունն է Սիմֆերոպոլ քաղաքում տեղադրված «Այվագովսկի եղբայրներ» քանդակը: Գաղափարական սլացքով ու գեղարվեստական գեղեցիկ մտահղացումով Թոքմաջյանը կրկին հաստատում է, որ, կերտելով հայ նշանավոր տարբեր գործիչների կերպարներ (աշխարհահռչակ ծովանկարիչ Այվագովսկի և կրոնական նշանավոր գործիչ, պատմաբան-փիլիսոփա Գաբրիել արքե-

պիսկոպոս Այվագովսկի), յուրաքանչյուր անգամ հանդես է բերում առանձին մոտեցում: Նա ելնում է խառնվածքից՝ տվյալ անձնավորության էությունից, նրա հասարակական, հոգևոր-մշակութային գործունեության բովանդակությունից՝ աշխատելով վեր հանել և բացահայտել առանձնահատուկ ու բնորոշը:

«Այվագովսկի եղբայրներ» քանդակում ընդգծված է հենց այդ. նկարիչը և հոգևորականը, իրարից որքան իրենց զբաղմունքով տարբեր, բայց ճակատագրի կտրվածքով նույնքան մման, որի մասին խոստովանում է վարպետը. «Մենք ուզում էինք, որ կոմպոզիցիան լինի խիստ մոնումենտալ և զգացվի ծովի տրամադրությունը, որ քանդակում արտահայտվում է հագուստի ծալքերի շարժման միջոցով: Նույնիսկ պատվանդան ընտրելիս առաջնորդվեցինք այդ տրամադրությամբ, ընտրեցինք ուկրաինական երկնագույն-կապտավուն գրանիտ: Ամբողջ քանդակախումբը ռզևորության պահ է արվեստագետի և հոգևորականի համար: Մեկը սովորեցնում է տեսնել գեղեցիկը, մյուսն ավետում է հավատը: Մարմարը հնարավորություն է տալիս արտահայտիչ արտացոլել այդ գաղափարը»:

Դիտողի ուշադրությունը կենտրոնանում է ոչ միայն եղբայրների դեմքի վրա, այլև մարմնի ու հագուստի, որոնք պատկերված են ազատ կերպով: Գաբրիել Այվագովսկու դեմքը համարյա ծածկված է սրածայր վեղարի ու փարթամորեն աճած բեղերի և մորուքի տակ: Վարպետորեն վերարտադրված է քիթը, սրատես աչքերը: Հովհաննես Այվագովսկու հուշարձանի հիմնականն ու որոշիչը ընդգծված է առանձնակի մի շեշտադրումով: Մի ստեղծագործություն, որի մեջ մարմնավորվել է մեծ նկարչի, ազգային շահերով ապրող մեծ գործչի կենդանի կերպարը: Նա համարձակ և շեշտակի նայում է առաջ, կարծես ուզում է որսալ ծովի ալիքների ուժգնությունը:

Նրա կենդանի հայացքի և ընդհանրապես դեմքի արտահայտության մեջ զգացվում է ներքին հզոր ուժ և աննկուն հաստատականություն: Նկարչի գեղեցիկ գլուխը պսակված է բարձր, ալիքաձև մագերով: Դեմքը խորհրդավոր է, բանաստեղծական: Նկարիչը խորասուզված է իր ներքնաշխարհում փոթորկվող մտքերի խորձանուտում: Այդ մտախոհ հայացքը գրավում է դիտողի ուշադրությունը և ստիպում է նրան կանգնել ու խորհել:

«Այվագովսկի եղբայրները» արձանի կոմպոզիցիան աչքի է ընկնում հավասարակշռությամբ և ներդաշնակությամբ: Քանդակագործը հրաշալիորեն կարողացել է որսալ անձերից յուրաքանչյուրի հոգեբանական բարդ խառնվածքը և վարպետորեն վերարտադրել նրանց դիրքերի ու դիմագծերի տարբերիչ փոխմիասնությունը: Թոքմաջյանը ձգտել է պարզության և հստակության: Եվ նա հասել է դրանց: Դիտողը զգում է, որ շատ վերքեր են տանջում այդ երկու նշանավոր մեծ գործիչներին, սակայն ամենից ավելի նրանց տանջում է հարազատ ժողովրդի ծանր վիճակը, տասնյակ դարերի մեծ մշակույթ ու քաղաքակրթություն ունեցող հայ ժողովրդի անորոշ ճակատագիրը, որ Հովհաննեսը պատկերել է իր նկարներում, Գաբրիելը գրել է իր գրքերում: Այդ ցավը ապրել է նաև քանդակագործը:

**Հուշարձանով հիացան ոչ միայն դրիմահայերը, այլև բարձր գնահատականի արժանացավ ուկրաինացի արվեստասեր ժողովրդի կողմից:** Մամուլի էջերում բազմիցս դրական հոդվածներ ու գրախոսականներ տպագրվեցին Լևոն Թոքմաջյանի արվեստի մասին: Նրա տաղանդը գնահատեցին նաև Երևանում: 2001 թվականի փետրվարի տասնչորսին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտը Լևոն Հախվերդյանի դեկավարությամբ որոշում ընդունեց. «Հայաստանի Հանրապետության վաստակա-



Լևոն Թոքմաջյանը որդու՝ Վահեի հետ

վոր նկարիչ, միջազգային մրցույթների բազմակի դափնեկիր Լևոն Թոքմաջյանը վերջին տասնամյակների հայ քանդակագործության ասպարեզում լայնորեն ճանաչված և առավել գնահատված վարպետներից է: Իր բեղմնավոր ստեղծագործության ընթացքում նա կերտել է մոնումենտալ և հաստոցային ժանրերին պատկանող գեղարվեստական բարձրարժեք քանդակներ, որոնց մի մասը գտնվում է տարբեր թանգարաններում (Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևանի ժամանակակից արվեստի թանգարան, Թբիլիսիի պետական պատկերասրահ, Մոսկվայի Տրետյակովի և Արևելյան արվեստի թանգարաններ, Ռավեննայի Դանտեի անվան կենտրոն և այլն), իսկ առանձին հուշարձաններ տեղադրված են Երևանի, Սիմֆերոպոլի, Մարսելի, Նիկոզիայի և այլ քաղաքների փողոցներում ու հրապարակներում:

1998 թվականին Լևոն Թոքմաջյանը ընտրվել է Յունեսկոյին կից Եվրասիական միջազգային գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ:

Հայկական և արտասահմանյան մամուլի էջերում բազմիցս դրական հոդվածներ և գրախոսականներ են տպագրվել Լևոն Թոքմաջյանի արվեստի մասին:

Վերջին մեկ-երկու տարիների ընթացքում Լևոն Թոքմաջյանի ստեղծած առավել աչքի ընկնող գործերի շարքում հատկապես առանձնանում են Սիմֆերոպոլում 1999-ին հանդիսավոր կերպով բացված հայազգի հանճարեղ Այվազովսկու՝ մարմարից կերտված մոնումենտալ հուշարձանը, ինչպես նաև 2000-ին Երևանում՝ նախագահական պալատի առջև դրված Նոյ Նահապետի և Տիգրան Մեծի՝ նույնպես մարմարից արված քանդակները:

Լևոն Թոքմաջյանի նշված աշխատանքները թե՛ իրենց գաղափարային բովանդակությամբ և թե՛ զուտ գե-

դարվեստականառումով ընկալվում են իբրև վերջին շրջանի ազգային քանդակագործության լուրջ նվաճումներ, կերպարվեստի դասական ավանդույթների և արդի ձևերի ներդաշնակ համադրումներ:

Հաշվի առնելով այս ամենը՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտը Լևոն Թորմաջյանի վերոհիշյալ աշխատանքները ներկայացնում է Գրականության և արվեստի բնագավառում պետական մրցանակներ շնորհող հանձնաժողովին՝ իբրև այդ մրցանակին միանգամայն արժանի ստեղծագործություններ»:

## «ԵՍ ԵՐԲԵՔ ԻՆՉ ԱՅՍԶԱՆ ՎԱՐՉԱՏՐՎԱԾ ՉԵՄ ԶԳԱՑԵԼ»

Դարեր շարունակ մեր ժողովրդի կենսափոխափությունը եղել է՝ նահատակությունը վերածել հաղթանակի, խաչելությունը՝ հարության, եղեռնը՝ վերածննդի: Օրինվի այն հողը, որ ծնում է մահկանացու մարդիկ ու նրանց դասում անմահների շարքը: Սրբեր, հերոսներ, հանճարներ որքան ասես շռայլորեն երկնել է հայրենի հողը: Նա տալիս է անհատույց, բայց նաև տանում է անվերադարձ:

Պատմության արհավիրքներ հաղթահարած մեր ժողովրդի հոգին ջահված եկեղեցի է, որի կամարների տակ, որպես անմար կրակով վառված կանթեղներ, առկայծում են սուրբ-հերոս-հանճարների նվիրական անունները:

Արցախյան պատերազմի ավարտից հետո ազգը կարիք ուներ իր արժանավոր զավակների այնպիսի հուշարձանների, որոնք հիշեցնեին ոչ թե նրանց մահն ու զերեզմանը, այլ նրանց հայրենասիրական գործունեությունը, ոգեշնչեին ու պահպանեին ազգի ոգին, նրա միասնությունը, լավագույն հատկությունները, մարմնավորեին նրա երազանքն ու ձգտումները և փոխանցեին սերունդներին: Այդ զգացումներով ծնվեցին Թորմաջյանի Մոնթե Մելքոնյան, Վազգեն Սարգսյան, Քրիստափոր Իվանյան մահարձանները, որոնք տեղադրված են ազատագրված Արցախի հողում:

«Փայլեցրու քո երեսը քո ամայացած սրբարանի վրա»: Այս աղոթքով էր կերտում արվեստագետն իր հերոսների կերպարները: Որքան հիշողություններ են կենդանացել արվեստագետի մեջ, ինչպիսի ծանր մտքեր են ալեկոծել նրան: Այսօր Մոնթե Մելքոնյանի արձանային մարմնացումը Արցախի Մարտունու շրջանի խորհրդանիշն է, նրա հավիտենության անձնագիրը, որի մասին արվեստագետը պատմում է. «Երեսուն տարվա ստեղծագործական կենսագրություն ունեմ և հեղինակ եմ տասնյակ հուշարձանների, որոնք այսօր զարդարում են աշխարհի տարբեր քաղաքների հրապարակներն ու քանդաքանները, սակայն... Սակայն երբեք այնքան բերկրանք ու հրճվանք չեմ ապրել, այնքան չեմ հուզվել, որքան հունիսի տասներկուսին, երբ Արցախի Մոնթեբերդ քաղաքի կենտրոնական հրապարակում բացվեց Մոնթե Մելքոնյանի հուշարձանը: Անչափ հուզվել էի՝ շուրջս տեսնելով հազարավոր մոնթեբերդցիների խանդավառությունը: Այնքան բազմամարդ էր հրապարակը, որ ինձ թվաց, թե ուրիշ ոչ մի ժամանակ, ոչ մի տեղում այսքան շատ արցախցի միասին չէին հավաքվել:

Ավոն նրանց համար պաշտամունք է, Ավոն անառիկ բերդ էր ու անառիկ բերդ դարձրեց Մարտունին: Այդ է պատճառը, որ ինչպես ճակատագրական այն պահին ժողովուրդը հավատաց Ավոյին, այնպես էլ հիմա, տեսնելով նրա վեր խոյացող հուշարձանը, ժողովուրդը կրկին հավատում է մոտեցող խաղաղությանը: Հուշարձանը, որ ունի հինգ մետր բարձրություն և կերտված է Արցախի Հարավ գյուղի վարդագույն մարմարից, իմ և որդու՝ Վահեի մվերն է մոնթեբերդցիներին (ի դեպ ասեմ, որ Վահեն մասնակցել է Շուշիի ազատագրմանը): Հուշարձանը կերտեցինք տասնութ օրում: Գրանիտե պատվանդանին, ռազմական իր հանդերձանքով, արժանապատվորեն հպարտ կանգնած է Ավոն: Հայացքը զուսպ է ու

մտախոհ: Թվում է, թե մարտից առաջ մտովի ծրագրում է իր անելիքը, փորձում կանխատեսել մարտի ելքը:

Աշխատանքային բոլոր օրերին ես ու որդիս զգում էինք տեղի բնակչության անչափ ուշադրությունն ու անսահման հետաքրքրությունը մեր գործի նկատմամբ: Նրանք ամեն ինչի պատրաստ էին, մեզ էին առաջարկում իրենց ծառայությունը: Ամեն օր, վաղ առավոտյան, երեխաները վարդերի փնջեր էին բերում մեզ: Իսկ այդ տարածքը մի իսկական վարդաստան էր հիշեցնում՝ իր ալ կարմիր ծաղկունքով: Չեմ կարող մոռանալ մահ Մոնթեի անունը կրող մանկապարտեզի փոքրիկ երեխաներին: Նրանք համդիպման էին հրավիրել ինձ և Վահեին: Անչափ հուզվեցի այդ օրը, երբ փոքրիկների կատարմամբ հնչեց Մոնթեին ու ինձ նվիրված երգը: Այդ օրը արցախցի բանաստեղծ Ժորա Խաչատրյանն առաջին անգամ ընթերցեց ինձ նվիրված իր բանաստեղծությունը: Հիմա անգիր չեմ հիշում այն, բայց միտքն այս էր. Մարտունին որդիաբար ընդունեց երկու մարդու, մեկն Ավոն էր, մյուսը՝ Ավոյին վերածնողը: Այդ օրը իմաստուն մի զգացում էր պարտել հոգիս, որ զուր չեմ ապրել իմ կյանքը: Այդ պահն անկրկնելի էր:

Մոնթեի հուշարձանն այսուհետև ուխտատեղի է դառնալու մոնթեբերդցիների համար, և նրանք իրենց աղոթքն ու խորհուրդը նրանից պետք է առնեն: Ժողովուրդն այդ օրը ակնածանքով մոտենում և սրբությամբ էր համբուրում քարը: Այդ բախտին չէր արժանացել իմ ստեղծագործություններից և ոչ մեկը: Հուզիչ էր մահ մեր վերադարձը Երևան: Մոնթեբերդցիները՝ մեծից փոքր, լուսանկարվեցին մեզ հետ և ճանապարհելիս (ի դեպ, մեզ հետ ուղղաթիռով Երևան եկավ Մոնթեի կինը՝ Սեդան) մեր հետևից ամբողջ ճանապարհի երկայնքով շաղ էին տալիս բազմերանգ ծաղիկներ: Մեր բաժանումը կարճատև է: Ես նրանց խոստացա մեկ ամսից վերադառնալ Մոն-

թերերդ: Շրջանի լիազոր-ներկայացուցիչ Ռաֆիկ Խաչատրյանի խորհրդով (որն, ի դեպ, ջանք ու եռանդը չխնայեց Մոնթեի հուշարձանի կառուցման գործում)՝ հուշարձանի շուրջ պետք է ստեղծվի հսկայածավալ մի հուշահամալիր, որը կնվիրվի Մարտունու շրջանի պաշտպանության համար զոհված չորս հարյուրից ավելի ազատամարտիկների հիշատակին»:

Լևոն Թոքմաջյանը սիրեց Արցախ աշխարհը, նրա պարզ ու հերոսական ժողովրդին: Արցախն էլ սիրեց նրան՝ իր նյութեղեն ու քարեղեն, գրավոր հիշատակներով: Եվ որպես զնահատական սիրո ու մեծարանքի՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունը որոշում ընդունեց. «Հայաստանի Հանրապետության ժողովրդական քանդակագործ, վաստակավոր նկարիչ, ակադեմիկոս Լևոն Հրաչի Թոքմաջյանը, լայն մտահորիզոնի, ուրույն ոճի և վարպետության, ճանաչված և նվիրված արվեստագետ է: Հայտնի արվեստագետի ստեղծագործական գործունեության մեջ առանձնակի տեղ է գրավում արցախյան շրջանը, որը սկսվել է դեռևս 1993-94 թվականներին Մարտունու շրջկենտրոնում կանգնեցնելով Արցախի ազատագրական պայքարի լեգենդար հերոս Ավոյի (Մոնթե Մելքոնյանի) մարմարե հուշարձանը: Շուշի քաղաքի Վազգեն Սարգսյան մարմարե հուշարձանը, Ղազանչեցոց եկեղեցու զանգակատան հրեշտակի մարմարե պատկերները և Ստեփանակերտում տեղադրված՝ Վազգեն Սարգսյանի դիմաքանդակը առանձնակի հմայք են տալիս Արցախի քաղաքների ճարտարապետական դիմագծին: Կարծում ենք, որ առաջիկայում մոտ գեղեցիկ գործեր ևս կհամալրեն հայ արվեստագետի ստեղծագործությունների ցանկը՝ նորովի հաստատելով հայ մարդու սերն իր հայրենի հողի, երկրի և ժողովրդի նկատմամբ: Նշված գործերը, մեր

կարծիքով, արժանի են ներկայացվելու Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից տրվող ամենամյա մրցանակաբաշխությանը»:

Թող այդ ձեռագործ մահարձանները՝ «Մոնթե Մելքոնյան», «Վազգեն Սարգսյան», «Քրիստափոր Իվանյան», ապագա սերնդի սրտի խորքում հավերժացնի ամնահ անունը մեծ հայրենասերների և հերոսների, որոնց հայացքում դրոշմված է մեծ բանաստեղծի՝ Ռաֆայել Պատկանյանի մարտակոչ խոսքը.

*Քաջ ես, լրսել ենք, ինքըդ մեծավոր  
Անուն հաղթողի ունիս փառավոր.  
Բայց թե թըրեդ շահ չունի Հայաստան,  
Թըքել ենք քու ալ, թըրիդ ալ վրան...*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

## ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆ ԻՆՔՆ ԻՐ ՄԱՍԻՆ

*Լևոն Թոքմաջյանը վարպետ է որպես արձանագործ, այդ արդեն բոլորի համար անառարկելի իրողություն է: Նա մահ երաժիշտ է, երգիչ. մույնպես հայտնի է: Ստորև ներկայանում է որպես գրող: Կարդում ես նրա մտորումները, և սրտիդ խորքում զարմանում, որ սեփական հոգին քննող այդ փիլիսոփա արվեստագետը ինչպես է կարողացել ճշգրիտ, հյութեղ լեզվով պատմել իր մասին:*

«Հայրս, ինչպես նրան անվանում էին՝ ուստա Հրաչը, դարսեցի Թոքմաջոց Նիկոլի որդին է: Մայրս Բաթումի հայերից է՝ հացթուխ Մինասի աղջիկը: Տակավին փոքրիկ երեխա էի, երբ ձեռքս ընկավ մեր ընտանեկան ֆոտոալբոմը, որտեղ տեսնում եմ վեց ամսականում լուսանկարված հորս՝ մի փոքրիկ զանգույակ ձեռքին: Սկզբում չգիտեի նրա ով լինելը, սակայն հետո իմացա, որ երբ պապս եղել է Բաթումում, տեսել է մորս, որն այն ժամանակ տասնվեց տարեկան էր և շատ գեղեցիկ, մորական պապիցս տղայի համար խնդրել է աղջկա ձեռքը: Նշանադրությանը հավաքվել են բոլոր բարեկամները, բացի հորիցս, բայց փոխարենը ցույց են տվել նրա վեց ամսականի նկարը և այդպես նշանել: Անցնում է որոշ ժամանակ, հայտնվում է հայրս, գալիս են Երևան և ամուսնանում: Հայրս կրթություն չի ստացել, սակայն, ունենալով ձեռքի շնորհ, զբաղվել է մախշքարությամբ:

Ծնվել եմ 1937 թվականի հունիսի տասնվեցին Երևանում: Պապերս շատ լավ ձայն են ունեցել և երգել: Հորա-

քույրս տարիներ շարունակ երգել է Արամ Տեր-Հովհաննիսյանի ղեկավարած՝ Հայաստանի պետական երգչախմբում:

Տասը-տասներկու տարեկան էի, երբ հորաքրոջս՝ Սիրանույշ Թոքմաջյանի հետ գնում էի նրանց համերգներին, որը կայանում էր Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում, Աբովյան փողոցի վրա: Տակավին փոքրիկ տղա՝ շունչս պահած հետևում էի երգչախմբային արվեստի այդ ծեր կախարդի՝ Արամ Տեր-Հովհաննիսյանի ձեռքի շարժումներին, որը զուսպ էր. խիստ, սակայն կոմիտասյան հոգու խորքից եկող:

Քույրս՝ Մարիամը, ինձնից փոքր էր չորս տարով: Մայրս պատմել է, որ քրոջս ծնվելուց առաջ հայրս շատ է երազել աղջիկ ունենալ և նրան կոչել մոր անունով, որը պետօպերայում երկար տարիներ դերձակուհի է եղել, և ոտքի առաջին երկու մատները իրար վրա են եղել: Երբ ծնվել է քույրիկս, զարմանալիորեն նման է եղել տատիս, և անունը դրել են Մարիամ, դեռ ավելին՝ ոտքի մատներն էլ իրար վրա են եղել:

Քույրս նույնպես օժտված էր երգելու և պարելու շնորհքով, սակայն մա շուտ ամուսնացավ և դարձավ չորս երեխաների մայր:

Ես շարունակում էի շրջել հորս հետ հայ գյուղերը: Հայրս ներկում էր պատերը, իսկ ես նկարում էի անկյուններում: Նկարում էի գյուղի տեսարաններ, կովեր, ոչխարներ:

Հիշողությանս մեջ անմոռաց է մնացել մի դեպք: Ամառ էր: Աշխատում էի հորս հետ Արտաշատի շրջանի Աղբաշ գյուղում: Նախագահի տունն էինք ներկում: Ես պատի անկյուններում նկարեցի նրանց կովերը, ոչխարները և խոզերը: Նա ուներ երեք աղջիկ՝ Դուխիկ, Դուրիկ, Վասպուրիկ: Երբ աղջիկները ներս մտան, ես արդեն

վերջացրել էի նկարները: Աղջիկներն ուրախությունից գոչեցին՝ «Վա՛յ, տեսե՛ք, սա մեր նախշուն կովն է»: Այդ պահին ես այնքան չուզվեցի, որքան հայրս, որը հպարտությունից գլուխը պարզել էր ու երկար մայում էր իմ նկարած կովերին: Ընդունվեցի Երևանի գեղարվեստի ուսումնարանը: 1953 թվականն էր: Իհարկե, քանդակագործության մասին չէի մտածում:

Ոչ մի անգամ ձեռքս կավ չէի վերցրել: Սակայն երբ ընդունելության քննություններից հետո ցուցակում կարդացի իմ անունը քանդակագործների բաժնում, տեղում քարացած կանգնեցի և արտասվեցի: Չէ՞ որ ես գունանկարչական բաժինն էի ուզում ընդունվել: Հանձնաժողովը գտավ, որ իմ զծանկարները ծավալային են և բնորոշ քանդակագործի մտածողությամբ: Ինչևէ, ընդունվեցի քանդակագործական բաժին, այսպես ասած, ինչպես գունանկարիչներն էին քանդակագործներին ձեռք առնում՝ «ցեխի հետ գործ ունեցողներ»: Սկսվեց իմ համերաշխ ու ներդաշնակ կապը այդ «ցեխի» հետ, այն կավի հետ, որն այնքան հաճելի էր և ենթարկվող քանդակագործի կամքին:

1957-ին ավարտեցի ուսումնարանը և ընդունվեցի Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտ: Երիտասարդ քանդակագործիս բախտը բերեց: Իմ դասախոսներն էին քանդակագործ Արա Սարգսյանը, որը կոմպոզիցիա էր դասավանդում, իսկ քանդակի ղեկավարը՝ Սուրեն Ստեփանյանը:

Այդ տարիներին Արա Սարգսյանի՝ իբրև քանդակագործի, փառքը մեծ էր: Եվ ուսանողներս խորին հարգանքով էինք վերաբերվում թե՛ նրա դասերին և թե՛ իրեն՝ իբրև անձի: Բոլորս մեծ ցանկություն ունեինք ընկնել նրա արվեստանոցը, դասերից հետո աշխատել: Նման ձգտում ունեի հատկապես ես:

Եվ մի օր Արա Միհրանիչի հետ գնացի նրա արվեստանոցը՝ Պուշկինի փողոցի վրա, որն այժմ դարձել է նրա տուն-թանգարանը։ Ոգևորություն անչափ մեծ էր։ Արա Սարգսյանի արվեստանոցում աշխատած տարիները ինձ՝ որպես ապագա ձևավորող-քանդակագործի, մեծ օգուտ տվեցին։ Նրա մոտ էին գալիս ժամանակի անվանի մարդիկ՝ Թաթուլ Ալթունյանը, ասմունքող Թամար Դեմուրյանը, Արամ Տեր-Հովհաննիսյանը։ Վերջինիս հետ ունեցած ծանոթությունը ճակատագրական եղավ ինձ համար։ Ես Արամ Տեր-Հովհաննիսյանին պատմեցի, որ հորաքույրս երգում էր, հայրս ու մայրս շատ լավ ձայն ունեին և նույնպես երգում էին, և որ այդ գեները փոխանցվել են մաս ինձ։ Ես երգում էի շարունակ, և երգս թևածում էր ամենուր։ Երգում էի ինստիտուտում կազմակերպած երաժշտական մի խմբում, որը շաբաթ և կիրակի օրերը մեկնում էր զինվորական զորամասեր՝ շեֆական համերգների։ Եվ ահա հանդիպումը երգչախմբային արվեստի մեծ երախտավոր Արամ Տեր-Հովհաննիսյանի հետ մեծ բեկում մտցրեց իմ կյանքում։

– Արամ ջան,– մի օր ասաց Արա Սարգսյանը, երբ մաեստրոն եկել էր բնորոման,– Լևոնը ամբողջ օրը երգում է, խնդրում եմ լսիր նրա երգը, տես մի բանի նման է։

Իսկ այդ պահին ես ամաչելուց թաքնվել էի սյան հետևը, որպեսզի դեմքիս հուզմունքը չնկատեն։

Արա Սարգսյանն իր բնակարանում ուներ մի գեղեցիկ փոքրիկ ռոյալ։ Արվեստանոցից աստիճաններով բարձրանում էին բնակարան։ Մաեստրոն լսեց ինձ ու գոհունակությամբ ասաց. «Շատ գեղեցիկ տենոր է, խորհուրդ կտայի գնայիր երգի-պարի անսամբլ՝ Թաթուլ Ալթունյանի մոտ»։ Ես զարմացա, թե ինչու խորհուրդ չտվեց երգչախումբ գնալու, որն այդ ժամանակ վերադարձել էր

Ստամբուլից։ Հովհաննես Չեքիջյանն էր գլխավորում Հայաստանի պետական երգչախումբը։ Ես միայն հետագայում իմացա, որ Արամ Տեր-Հովհաննիսյանն այդ ժամանակ դեռ չէր հաշտվել այն մտքի հետ, որ երգչախումբն այլևս իր ձեռքում չէ։

Ինչևիցե, Արա Սարգսյանը մի երկտող գրեց. «Հովհաննես ջան, գրաբերս իմ ուսանողն է, լսիր, եթե կհավանես՝ վերցրու մոտդ երգելու»։

Դեռ 1963 թվականի մարտ ամիսն էր։ Ավարտել էի ինստիտուտն ու ընդունվել այդ ժամանակ հասարակական կարգով բացված ժողովրդական կոնսերվատորիայի վոկալ բաժինը։ Եվ այդպես ինձ համար սկսվեց ստեղծագործական մի շրջան, որն անմիջականորեն կապված էր Հայաստանի պետական երգչախմբի և առանձնապես մեծ խմբավար և երաժիշտ Հովհաննես Չեքիջյանի հետ։

Սկսվեց իմ շրջագայությունը Խորհրդային Միության և արտասահմանյան շատ ու շատ քաղաքներում, ավաններում։ Տեսա, շփվեցի մարդկանց հետ։ Բեմում կանգնած երգում էի, նայում դահլիճում նստած մարդկանց, որսում նրանց դեմքի արտահայտությունները, հիշողությանս մեջ պահում ու, երբ վերադառնում էի Երևան, հիշողությամբ և թարմ տպավորությամբ քանդակում էի։ Քանի՜-քանի՜ անգամ մաեստրո Չեքիջյանը բեմի վրա նկատողություն է արել. որ երգելիս իրեն չեմ նայում։ Նա չէր սիրում, երբ որևէ երգիչ համերգի ժամանակ իրեն չէր նայում, չէ՛ որ ինչպես քանդակագործի ձեռքի կավը և քարը, այնպես էլ երգչախմբի ողջ կազմն այդ թուլեցներին մի գունդ կավի կամ մի բեկոր քարի էր նման, որը պետք է ենթարկվեր մաեստրոյի ամենազգայուն շարժումներին։ Նա ինձ համար մեծ ուսուցիչ էր։ Այդ տարիներն ինձ համար ինքնահաստատման, արվեստում իմ ճանապարհը գտնելու ժամանակաշրջան էր, տքնութ-

յամբ, սպասումի և հավատի, ուրախության ու հիասթափության տարիներ:

1968 թվական: Բացվեց իմ անդրանիկ անհատական ցուցահանդեսը «Ավանգարդ» թերթի խմբագրատանը: Դա իմ առաջին քննությունն էր, առաջին հանդիպումը արվեստասերների հետ: Ցուցահանդես այցելած բազմաթիվ այցելուներից ինձ համար ամենատպավորիչը եղան տաղանդավոր քանդակագործ Երվանդ Քոչարի այն խոսքերը, որը նա թողեց տպավորությունների գրքում.

«Լևոնի քանդակները շոյում են իմ ազգային արժանապատվությունը, նրա երակներում բաբախում է ժամանակի արյունը: Մենք դեռ շատ սպասելիքներ ունենք նրանից:

*Երվանդ Քոչար. 1968թ. ապրիլ, ք. Երևան»:*

Այս խոսքերը մասունք դարձան ինձ համար, քնավորող մի փարոս, հույսի և վստահությունն արդարացնելու բուռն ցանկություն: Բայց միևնույն ժամանակ շարունակում էի երգել: Երգը դարձել էր իմ հիմնական զբաղմունքը, իսկ երգից դուրս, ազատ ժամերին քանդակում էի: 1970 թվականին «Երգ» քանդակախմբի համար արժանացա Հայաստանի լենինյան կոմերիտիության մրցանակի դափնեկրի կոչման: Ոգևորությունը մեծ էր: Դա իմ առաջին ստեղծագործական արդյունքի հասարակական գնահատությունն էր՝ և պարտավորեցնող: Աշխատում էի ստեղծագործական տեսողությունս լայնացնել՝ ընդգրկելով ոչ թե առարկան, այլ նրա մթնոլորտը: Հաճախ մի որևէ երգ երգելիս մտածում էի այդ երգը քանդակ դարձնել: Այդպես էլ ծնվեց իմ տարիներ շարունակ երգչախմբում կատարվող «Խոհեր» երգի մարմարե քանդակը: Քարը, փայտն ինձ համար դարձան մարդկային բազմա-

ծայնության սիմվոլ: Քարին պետք է ձայն, փայտին հնչյուն ներարկել:

Էջմիածնի քաղաքային այգի: Հաստաբուն կարադաշները մեկը մյուսի հետևից չորանում էին: Փայտահատները կտրում էին, տանում որպես ձմեռվա վառելիք: Ես օրերով կանգնում, նայում էի այդ ոչնչացվող հսկաներին և սրտի կսկիծով մտածում, թե ինչպես օգտագործեմ այդ մյուսը քանդակի համար: Նորից իմ մեջ արթնանում էր բնության հետ մերվելու, բնության ձայնը լսելու կարոտը, ողջ ձայնով երգելու բուռն ցանկությունը: Արվեստագետը լռելու իրավունք չունի: Ծառաբունն իր մեջ կրում է ժողովրդի տարիքը, պատմության շերտերը, որոնք անհրաժեշտ է ցույց տալ: Եվ ես չթողեցի կտրել մի ծառը, հետո երկուսը, երեքը, չորսը: Դրանք դարձան հեքիաթ, բարուց ու չարից ծնված երգեր, որտեղ գորեղ է բարու մեղեդին: Այդ փայտե քանդակները ոչ միայն զարդարեցին Էջմիածնի քաղաքային այգին, այլև շրջապատի կանաչի և փայտե քանդակների գեղեցիկ համադրություն ստեղծեցին: Ես սիրեցի այդ քաղաքը, իսկ քաղաքն էլ սիրեց իմ երգերը: Այդտեղ ծնվեցին «Աղջիկը ուղով» բազալտե քանդակը, որը հետագայում Էջմիածինցիներն անվանեցին «Հասմիկի քանդակը», գուցե շատ սիրելուց կամ նրա համար, որ այդ քանդակը կանգնեցվել էր «Հասմիկ» ծաղկի խանութի առջև: Թեման պատահական չէր ծնվել, պատահական չծնվեցին նաև այլ տարբերակներ, մարմար, փայտ, ամեն մեկն ունենալով իր յուրահատուկ տոնայնությունը, պլաստիկան: Հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը, երբ 400 թվականին Բյուզանդիայից բերեց իր թանկարժեք գյուտը, առաջինը մտավ Էջմիածին, և ահա այդ առիթով մտորում էր ստեղծել կոմպոզիցիոն քանդակ՝ ի հավեր-

ժացումն հայ ժողովրդի գոյատևման համար խոշոր նշանակություն ունեցող այդ երևույթի:

1977-78 թվականներին էր, երբ ձեռնամուխ եղա այդ գործին, բայց ինչպե՛ս: Չէ՛ որ Երևանում արդեն կանգնեցվել էր, ուրեմն իմ քանդակը պետք է ունենար այլ գաղափար, այլ լուծում: Եթե Երևանում դրված Մեսրոպ Մաշտոցի և նրա աշակերտների գաղափարական ընդհանրացումն այն է, թե «ով տառ և գիր ունի, նա կյանքում անպարտելի է», ապա իմ մտահղացմամբ Մեսրոպ Մաշտոցը թելադրում է հայոց տառերը իր աշակերտ Կորյունին, որը քարե մատյանին փորագրում և հավերժությանն է հանձնում այդ տառերը: Այստեղ Կորյունը պատկերված է իբրև ժողովրդի հավաքական կերպար:

Ջնքշանք, կյանքի հրճվանք, ջահելացման խորք ունեն սիրային, մայրական երգերը, որոնք անպատճառ կապված են կանացի կերպարի հետ: Այդ կերպարին ես անդրադառնում էի մի ուրիշ հուզականությամբ: Սիրային այդ մոտիվներում քարի հուժկու բեկորները վերածվում էին քնքշանքի, սիրո մեղեդու: Ես սիրահարվում էի, շատ էի սիրահարվում, և միշտ փնտրում էի ինձ սիրելի, ինձ հարազատ կնոջ կերպարը:

«Կարիներ» դիմանկարը կարմիր մարմարից: Չկար այդպիսին: Սակայն իմ հոգու տաղարանում մաքուր ու ջինջ էին աշխարհի գույների նվիրումը, ձգտումը, սպասումը, ինձ համար կանացի որոշ անուններ դառնում էին կերպարներ: Սիրում էի աշխատել քարի վրա, մանավանդ մարմարի: Մարմարի մեջ տեսնում էի քանդակագործի համար չհայտնաբերված հնարավորություններ: Նրա գույնը, նրա պլաստիկան, նրա լեզուն չես կարող համեմատել ոչ մի ուրիշ նյութի հետ: Մարմարը կարելի է համեմատել միայն ջութակի հետ: Ինչպես ջութակի վրա

նվագողը չի կարող ոչ մի կեղծ նոտա նվագել. որովհետև ամմիջապես զգացվում է, այնպես էլ մարմարի վրա չես կարող ոչ մի կեղծ ֆորմա քանդակել, այն ամմիջապես երևում է: Նա մեղմ է ինչպես կանացի գեղեցիկ ու հոգեթով կառուցվածքը, միևնույն ժամանակ գորեղ է իր հնչեղությամբ, իր թափանցիկությամբ: Դրա համար, երբ հերոսի տրամադրությունը, կոմպոզիցիոն կառուցվածքը գտնելու համար աշխատում էի կավի վրա, և չէր ստացվում, մարմարի մեջ գտնում էի այն, ինչն ինձ երկար ժամանակ տանջում էր: Սիրում էի մարմարը տաշել հատկապես արևի տակ: Այն ավելի թափանցիկ է դառնում և ավելի պարզորոշ: Երբ աշխատում էի «Աղջիկը ուղով» կոմպոզիցիոն քանդակի վրա և կավով այն չէր ստացվում, ես փորձեցի անել փայտի վրա, որն այժմ գտնվում է Երևանի փայտի թանգարանում:

Սակայն փայտն ունի իր յուրահատուկ պլաստիկան և այն չտվեց այն, ինչ որ ուզում էի: Նույն կոմպոզիցիան սկսեցի տաշել բազալտ քարից: Այդ տարբերակը տեղադրված է Էջմիածնում: Այդտեղ նույնպես չհասա արտահայտչականության այն մակարդակին, որին ձգտում էի: Վերջապես գտա մի մարմարի բեկոր և սկսեցի տաշել: Մարմարի մեջ գտա իմ փնտրածը: Այդ աշխատանքը ցուցադրվում է ժամանակակից արվեստի թանգարանում: Այդ թանգարանում ցուցադրվում է նաև «Զարթոնք» մարմարե կոմպոզիցիոն քանդակը, որի մի տարբերակն արել էի փայտի վրա և այժմ ցուցադրվում է Մոսկվայի արևելյան ժողովուրդների արվեստների թանգարանում: Սակայն մարմարե տարբերակը իմ ամենասիրելի աշխատանքներից է: Կնոջ կիսաֆիգուրը, փարթամ և լիքը կրծքով. թևերը վեր պարզած, կյանքի հավերժության գաղափարն է արտահայտում: Այդ աշխատանքը կատարելիս ես միևնույն ժամանակ աշխատում էի

Մարտիրոս Սարյանի հուշարձանի վրա, տաշում էի մարմարը: Ահա ինձ համար երկու հակադիր ստեղծագործություններ:

1976 թվականին ես մեկնեցի Հարավսլավիա, Պրիլեպ քաղաքը՝ մասնակցելու քանդակագործների համաշխարհային մրցույթին: Տեղի սպիտակ մարմարն ինձ շատ էր ոգևորել: Սպիտակ մարմար:

Ինչպիսի՞ն պետք է լինի արվեստագետի երևակայությունը, որպեսզի նայելով այդ ճերմակ քարաքեկորներին՝ ուրախությունից ճչար, գրկեր բնությունը և հազար օրհնանք տար Աստծուն՝ նման գեղեցկություն ստեղծելու համար: Ինձ հետ աշխատում էին իտալացի, ֆրանսիացի և ճապոնացի քանդակագործներ, որոնք, զինված ժամանակակից քար կտրող, հղկող մեքենաներով, զարմացնում էին հայ արվեստագետին: Իսկ իմ ունեցածը մեկ մուրճ և մեկ հատիչ էր, այն էլ Երևանից էի տարել: Իհարկե, նրանց կողքին ես նման էի նախամարդու՝ իմ սլարգունակ գործիքներով: Երբ ընդմիջման ժամը գալիս էր, իմ կոլեգաները գնում էին ճաշարան, իսկ ես վերցնում էի այդ գործիքները և աշխատում. ինչպիսի՞ բերկրանք, աշխատանքի ինչպիսի՞ հեշտացում:

Սակայն ինձ վիճակված էր մեկիկ-մեկիկ քարեր պոկել, ձեռքով հղկել: Ես ստեղծեցի «Թռչող թռչուններ» քանդակը, որն իմ հարավսլավացի ընկերները, ի նշան հայ և հարավսլավական ժողովուրդների մտերմության, անվանեցին «Բարեկամություն»: Թող ինչ ուզում են կոչեն, մտածում էի, ես հասել եմ իմ նպատակին, ստեղծել եմ երկու ծավալներ, որոնք շարժվում, ճախրում են:

Առաջին մրցանակը տրվեց իմ քանդակին և դրվեց քաղաքի կենտրոնական «Լիպպա» հյուրանոցի առջև: Հոգիս հաղթությամբ էր լցվել, թևեր էի առել և գրկած տանում էի սպիտակ մարմարի պերը՝ իբրև հոգու մի մաս-

նիկ: Այդ տարիներին «Ավանգարդ» թերթում գրվեց մի հոդված իմ մասին՝ «Հոգու մի մասնիկը...» վերնագրով:

Լավ եմ հիշում այդ տարիները, ոգևորվել էի: Սակայն չէի մտածում, որ հոգին ունի հազար ու մի մասնիկ, ինչո՞ւ մի մասնիկը, երևի հետագայում պետք է այդ հազար ու մի մասնիկներն էլ տալի, որպեսզի ստեղծվեր Մարտիրոս Սարյանի հուշարձանը սպիտակ մարմարից: Հարավսլավիայի հաջողությունն ինձ տարավ Լեհաստան, Օրոնսկ քաղաքը, որը համարվում է լեհ քանդակագործության կենտրոն: Այնտեղ ես քանդակեցի «Ջանգեզուր-ցի կինը» նույնպես սպիտակ մարմարից, և այն արժանացավ Լեհաստանի նկարիչների միության մրցանակին:

Լեհաստանում արդեն իմ մեջ խմորվում էին դանտեական տեսիլքները: Մի լեհ քանդակագործի՝ Մաչեյ Շոնկովսկու հետ ամեն երեկո քննարկում էինք, թե ինչպիսին է Դանտեի «Աստվածային կատակերգությունը» ժամանակակից մարդու համար: Այդ գրույցներից և իմ կարդացածից հետագայում պետք է ստեղծվեր «Դանտեն և Վիրգիլիոսը դրախտի մուտքի առջև» մարմարե կոմպոզիցիան, որի համար իտալական Ռավեննա քաղաքում անցկացվող քանդակագործների միջազգային մրցույթում արժանացա ոսկե մեդալի և քաղաքի պատվավոր դիպլոմի: Այնուհետև այդ աշխատանքը ցուցադրվեց Հռոմում (Վատիկանում): Այդ թեման շարունակվում էր: Դանտեն և Սարյանը: Ի՞նչ կապ ունեն: Մեկն ապրել ու ստեղծագործել է 12-13-րդ դարերում, մյուսը՝ 20-րդ դարում: Մեկը գրող, մյուսը՝ նկարիչ: Սակայն երկուսն էլ գովերգել են մարդու երջանկությունը, արևի ջերմությունը և սիրտ երջանկությունը: Մարդը մահկանացու է, բնությունը՝ հավերժական:

Երևի պետք է լինել Դանտե կամ Սարյան, որպեսզի հասկանաս այս պարզ ճշմարտությունը: Երևի այդ պարզ ճշմարտության մեջ է մեծերի մտքի և հոգու ճշմարտությունը, փիլիսոփայությունը: Դիմելով նման թեմայի՝ ուզում ես հասկանալ նրանց, մտնել նրանց էության մեջ: Դանտեական թեման, նրա «Աստվածային կատակերգությունը» ինձ համար դարձավ անվերջանալի մի պատմություն, այսօրվա մարդու ճակատագիր: Ստեղծվեց «Դանտեի նշանադրությունը», «Դանտեի տառապանքը» քանդակը որն արդեն ուղարկված է Խտալիա՝ Ռավեննա՝ մասնակցելու ութերորդ միջազգային քինմալեին: Դանտեական թեման ինձ համար միայն ինքը՝ Դանտեն չէ, Դանտեի մրջավայրը չէ, նրա տառապանքն ու ուրախությունը չէ, այլ ես իմ մտորումները փորձում էի գտնել այդ թեմայի մեջ, նորից փոքրածավալ մարմարե կտորներում և գծանկարներում: Այսօրվա հայ կանացի կերպարները փորձում էի գտնել Բիատրիչե հիշեցնող կնոջ մեջ, որը դառնում է սիրո և գեղեցկության մարմնացում:

Այդպես եղավ իմ առաջին ծանոթությունը Արամ Խաչատրյանի հետ, երբ առաջին անգամ կատարեցի երգչախմբի և տավիղների հետ «Չոն ցնծության» կանտատը: Դիրիժորի ղեկի մոտ էր ինքը՝ մեծն մանստրո Խաչատրյանը: Ես վերացած երգում էի և նայում նրա խոշոր դիմագծերին, քրտինքը ճակատից հոսում էր դեպի հյուսիս շրթունքները և քրտնակալած ձիու նման փնչացնում էր: Այդ անմոռանալի պահը մինչև օրս հիշում եմ և աշխատում իմ քանդակներում հասնել այդ տպավորությանը:

1984 թվականին մախ Երևանում, ապա Մոսկվայի կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրվեց Լաերտ Վադարչյանի «Մարդ, կոմպոզիտոր, քաղաքացի» չորսսերիանոց հրաշալի ֆիլմը: Այդ ֆիլմը սկսվում ու

վերջանում էր իմ քանդակած Արամ Խաչատրյանի դիմաքանդակով: Ֆիլմի հաջողությունը մեծ էր: Այդ առիթով նշանավոր դիրիժոր Գեմադի Ռոժդեստովենսկին «Սովետական կուլտուրա» թերթում 1985 թվականին գրեց, «Արամ Խաչատրյանի դիմաքանդակն արդեն լրջացնում է դիտողին, և որպես ֆիլմի սկիզբ՝ ոգևորության ալիք է ստեղծում մարդու հոգում»:

Իհարկե, նման գնահատականը անչափ ուրախացնում և նոր որոնումների էր մղում ինձ: Դրանից հետո ես նորից շարունակում էի իմ սիրելի Արամ Խաչատրյանի կերպարի նորովի մեկնաբանումը: Միավաճ չեն լինի, և թող ների ընթերցողը, երբ կոմպոզիտորին համարում եմ իմը:

1973 թվականին էր, երբ խումբը պատրաստում էր Արամ Խաչատրյանի «Չոն ցնծության» կանտատը, և չափ էր տալիս կոմպոզիտորը: Ես փորձից հետո մոտեցա նրան, խնդրեցի, որ ժամանակ գտնի և գոնե մեկ ժամով այցելի իմ արվեստանոցը, որպեսզի պորտրեն քանդակեմ: Այդ օրը չհաջողվեց, ինչ-որ տեղ էր հրավիրված: Հաջորդ օրը կես ժամով Արամ Խաչատրյանը եկավ ինձ մոտ: Ես հափշտակված աշխատում էի, քրտինքի մեջ կորել էի, չէ որ ընդամենը կես ժամ պետք է բնորդեր, սակայն այդ կես ժամը ինձ համար ամբողջ մի հավերժություն էր թվում: Երբ ժամանակը լրացավ, նա վեր կացավ, մոտեցավ իր դիմաքանդակին, նայեց բոլոր կողմերից և հանգիստ ասաց, «Նմանությունը այնքան էլ շատ չի, սակայն դեմքի արտահայտությունն իմն է, ապրես, լավ է»: Ես ուրախությունից ուզում էի գրկել, համբուրել այդ մեծ մարդուն: Անցան տարիներ, կերտեցի շատ ուրիշ տարբերակներ, սակայն այդ մեկն ամենաթանկագինն է ինձ համար:

1984 թվականին հանդիսավոր պայմաններում, Մարսել քաղաքի երաժշտանոցի դահլիճում դրվեց Արամ Խաչատրյանի բրոնզե կիսանդրին: Այդ առթիվ ֆրանսիական թերթերը ջերմ խոսքեր ուղղեցին իմ հասցեին: Դա բավական ոգևորիչ էր: Սակայն ինքնագոհացումն արվեստում նույնն է, ինչ ինքնասպանությունը:

Անընդհատ դժգոհ լինելն առաջ է բերում տառապանք, հիասթափություն: Նման պահեր ես ունեցել եմ, երբ աշխատել եմ Արամ Խաչատրյանի կերպարի վրա: Լինում էին պահեր, երբ թվում էր, թե արդեն գտել եմ ձեռքի շարժումը, կեցվածքը, գլխի արտահայտությունը, և ջրում ծածկում էի կավը: Հաջորդ օրը բացում էի՝ չէ, այն չէ, ասում էի ինքս ինձ ու նորից քանդում: Բալզակային լիքը դեմք ուներ Արամ Խաչատրյանը, բայց այդ լիքը դեմքը, հաստ շրթունքները, մեծ աչքերը պետք է ծառայեին որպես՝ միջոց նրա դինամիկ երաժշտությունը լսելու համար:

Պատահական իմ ձեռքն է ընկնում «Մովեստկայա կուլտուրա» թերթում 1987 թվականի համարներից մեկը, որտեղ հոդվածներից մեկը այսպես էր կոչվում՝ «Մտքի էներգիան և զգացմունքի միտքը»: Դա Մեծ քատրոնում Յու. Գրիգորևիչի բեմադրած՝ Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետի երաժշտության առիթով գրված փոքրիկ մի հոդված էր: «Արամ Խաչատրյանի երաժշտության ազդեցիկ ուժը, — գրում է Յու. Գրիգորևիչը, — նրա էնոցիոնալ մեծ ուժի մեջ է, ոչ մի ֆրագի մեջ չկա կիսազգացմունք, կիսաէմոցիա: Ամեն ինչ ամբողջական է, ռոմանտիկական, զգացմունքի և մտքի առատություն, հերոսական, տոնական»: Եվ այստեղ ես համոզվեցի, որ իմ փնտրտումները իրավացի են: Նրա կերպարը պետք է լինի հյութեղ, շարժուն, ինչպես երաժշտությունը, որն այնքան մոտ ու հարազատ է ինձ և յուրաքանչյուր

երաժշտասերին: Ես մտածում էի մարմարից տաշել, բայց գտնում էի, որ ավելի հնչեղ կլինի, եթե այն լինի բրոնզից...

Իսկական արվեստի նպատակը ազնվացնելն է, բարձրացնելը, արժեքավորելն այն ամենը, ինչին իջնում է նրա հովանավոր աջը: Արվեստի կոիվը միշտ եղել է մարդու բարի ուժը, նրա գեղեցկությունը կործանող բռնության դեմ: Եվ եթե Արամ Խաչատրյանի դինաքանդակը Մարսելում կարող է նվիրումի ու ոգևորության սիմվոլ դառնալ ոչ միայն երաժշտանոցում սովորող ֆրանսիացի և հարյուր հիսուն հայ ուսանողության համար, որոնք ամեն առավոտ իրենց դասարանը մտնելուց առաջ թարմ ծաղիկներ են դնում իրենց մեծ հայրենակցի արձանի պատվանդանին, ապա դա բարու հաղթանակն է:

Ես երջանիկ էի: Երջանիկ էի մասն այն օրը, երբ գարնանային մայիսը իր ջերմ շողերը սփռեց ճերմակ մարմարի հսկա այն բեկորին, որը մարմնավորում էր հայ գունանկարչության մահապետ Մարտիրոս Սարյանի հավերժական կերպարը:

Հետագայում Ադասի Այվազյանը «Գարուն» ամսագրում կգրի. «Իմ քաղաքին պակասում էր սպիտակ գույնը: Սարյանն իր ողջ գիտակցական կյանքում փնտրել է սպիտակը, և ահա վեր է խոյացել ճերմակագույն այս հրաշք կոթողը, որը հայ ժողովրդի վերածնության մի նոր վկայությունն է»:

Մինչև երևանյան Սարյանի տեղադրումը ես երկար ժամանակ աշխատում էի Դոնի Ռոստովի (Նոր Նախիջևան), այժմ Պրոլետարական շրջանում կանգնեցված Սարյանի հուշարձանի վրա, որը մեր հանրապետության նվիրատվությունն էր Դոնի Ռոստովի աշխատավորությանը, որտեղ որ ծնվել է մեծ նկարիչը: Պա-

տասխանատվությունը մեծ էր: Իսկ ինչպիսին պետք է լինի երևանյան Սարյանը:

Այն պուրակը, որտեղ դրվելու էր արձանը, ես հաճախ էի գալիս, նստում նստարանին և երկար մտորում: Չէ որ սիրելի նկարիչը մույնպես քանի՜-քանի՜ անգամ է անցել այս պուրակով, նստել, զրուցել իր ծանոթների և անծանոթների հետ, ուրեմն ինչպիսին պետք է լինեի հավերժության մեջ նրա անմահությունը:

Իհարկե, աշխատելիս, արարման պահին, ինչպիսին որ նրա դիմանկարներն են: Սուր հայացք, անխոնջ մշակի հագուստով, ինքնամոռաց ստեղծագործելիս: Եվ ինչպես Իլյա Էրենբուրգը կգրեր. «Երբ Սարյանը նկարում էր, թվում էր, թե ոչ թե վրձին է բռնել, այլ թուր»:

Ես երկար աշխատեցի այդ քանդակի վրա: Չէ որ պետք է ստեղծելի բնավորություն, կամք:

Վահագն Դավթյանը ոգևորված գրեց. «Քնքուշ նյութ է մարմարը, Թոքմաջյանը սարյանական հզորություն տվեց նրան»:

Անշափ զգացված, ոգևորության բազում դասեր ստացա իմ շրջապատից: Սակայն շրջապատին մի հարց էր հետաքրքրում, որին ամեն անգամ սիրով պատասխանում էի, այն է՝ ինչո՞ւ Սարյանի քանդակը ոտաբոբիկ է: Ինչ լա՞վ է, մտածում էի ես, ամեն ինչ հասկանալի է և ընդունելի, բացի ոտքերի լուծումից: Սովորաբար հուշարձաններում հեղինակները կերպար ստեղծելիս շեշտը դնում են դեմքի և ձեռքերի վրա՝ ստեղծելով երկու խոսուն ծավալներ: Ինչպես, օրինակ, Ալեքսանդր Թամանյանի հուշարձանը Երևանում: Արմեն Տիգրանյանի, Հովհաննես Թումանյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Կոմիտասի: Ես իմ հուշարձանում ավելացրի ևս մի ծավալ՝ ոտքերը, որպեսզի է՛լ ավելի խոսուն և արտահայտիչ լինի: Նախ ոտաբոբիկ, մարմարից գեղեցիկ է, այնպես,

ինչպես հույներն ու իտալացիներն են իրենց աստվածներին պատկերել: Երկրորդը՝ դրանով շեշտել եմ մեծ նկարչի ամուր կապը մայր բնության հետ, նրանից ծնվող, նրանից դուրս եկող սարյանական գույների ռիթմը: Իսկ որ ամենակարևորն է, պլաստիկական իմաստով այն հարմոնիկ է: Կոմպոզիցիան սկսվում է պատվանդանից, թևերի շրջապատույտ շարժումով դեպի գլուխը:

Իհարկե, սպիտակ գույնը սկզբում խորթ էր երևանցիների համար, որոնք միշտ տեսել էին բազալտե և բրոնզե հուշարձաններ: Այժմ կարծես թե ներդաշնակվել է շրջապատի կանաչ տարածության հետ և լուսարձակի նման ակտիվ մի բեկոր դարձել: Իսկ ամենաուրախալին այն է, որ միշտ շուրջը երիտասարդ նկարիչներ են, ասես դասեր են առնում մեծ վարպետից:

Կանացի մերկ մարմինը միշտ գրավել է ինձ, ոչ թե որպես մերկություն կամ լոկ գեղեցկություն, այլ որպես սիմվոլիկ գաղափարների խորհրդանիշ: Իտալական և հունական վարպետները այն պատկերում էին իբրև մարդկային կատարյալ գեղեցկության օրինակներ: Սակայն մեր օրերում միայն գեղեցկությունը բավական չէ նկարչի գաղափարների արտահայտման համար: Նրան պետք է տեսնել շարժման, արարման պահին: Շարժման ժամանակ կնոջ մարմինը ունենում է անսահման երևակայական նյութ, պատկերելու թե՛ հերոսություն, թե՛ կանացի գեղեցկություն և թե՛ մայրական նվիրատվություն: Այս մտքերը երևի կապված են իմ մանկության տարիների հետ:

Հիշողության կծիկը հետ է գնում. Ամիրյան փողոցի վրա կար ս. Պողոս եկեղեցի, իսկ հետևի մասում՝ բաղնիք: Մենք ապրում էինք Սվերդլով փողոցի վրա, և մայրս հաճախ իր հետ ինձ բաղնիք էր չնանում, այն էլ կանանց: Ես լողանում էի և աչքի տակով նայում լողացող մերկ

կանանց: Ոմանց ազդրերն էին երևում, ոմանց ստինքները: Գոլորշու միջից ինչ-որ մարմնի հատվածներ էին երևում: Ու երբ բաղնիքից դուրս էինք գալիս, ես ամմիջապես եկեղեցու բակով փախչում էի, որ հանկարծ չիմանան իմ տղա լինելը: Ճիշտ է, ես դեռ փոքր էի, բայց տպավորվող:

Շուտով հրավիրվում եմ Ֆրունզե՝ համամիութենական գիտաժողովի: Այնտեղ իմ «Երջանիկ մայրություն» մարմարե աշխատանքը պարզևատրվեց Կիրգիզիայի Գերագույն խորհրդի պատվոգրով, և ԽՍՀՄ նկարիչների միության առաջին մրցանակով: Այդ աշխատանքում գովերգում էի մայրության գեղեցկությունը: Այնտեղից հրավիրվեցի Տաշքենդ: «Ակտաշ» կոչվող բարձրադիր լեռան ստորոտին աշխատում էինք: Ես ընտրեցի ոչ մեծ չափի մարմար և մեկ շաբաթում քանդակեցի պառկած մերկ կնոջ ֆիգուրա: Իմ հիշողություններում դեռ կենդանի ու վառ էր մանկությանս տարիների կանանց բաղնիքը: Այդ աշխատանքը նույնպես աննկատ չմնաց, այն արժանացավ Ուզբեկստանի նկարիչների միության պատվոգրի: Այդ օրերին Երևանի տարբեր հասարակական վայրերում, աշխատավորական կոլեկտիվներում ես հանդիպումներ էի ունենում: Եվ ամեն անգամ ինձ հարց էին տալիս, թե ո՞վ է, ո՞ր քանդակագործն է իմ ոգևորության աղբյուրը: Հոգուս նվիրումով և երախտագիտությամբ նշում էի, որ միշտ խոնարհվել եմ հին հունական և իտալական քանդակագործության առջև, իսկ 19-րդ դարի ֆրանսիական քանդակագործությունը աշխարհին շատ բան տվեց:

Գալով 20-րդ դար, պետք է ասել, որ անգլիացի քանդակագործ Հանրի Մոռը, իտալացի քանդակագործներ Մարիոնո Մարինին, Ջակոմո Մանձուն իրենց ստեղծագործություններով ցույց տվեցին, որ թեմայից դուրս գո-

յություն ունի քանդակագործական ծավալային հարաբերություն, պլաստիկա, նյութի լեզուն հասկանալու, զգալու և վերարտադրելու հսկայական երևակայություն, իսկ այդ բոլորի հիմքը կազմում է կյանքի կենդանի զգացողությունը:

Լավ եմ հիշում, մի առիթով Երվանդ Քոչարը եկել էր երևանյան ցուցահանդեսներից մեկը, իսկ երբ մա մի տեղ էր լինում, բոլորը թափվում էին նրա շուրջբոլորը և հարցեր տալիս, նրա խոսքերը խորն էին, բովանդակալից: Երվանդ Քոչարը միշտ ասում էր, որ իսկական կերպարվեստի ստեղծագործությունը ունի երեք հիմնական պայման, այն է՝ ուժեղ ձեռք, խոր գաղափար և բուռն զգացմունք, այդ երեքից մեկի բացակայությունը ստեղծում է ոչ բարձրարժեք ստեղծագործություն: Իրոք այդպիսին է «Մասունցի Դավիթ» արձանը, արվեստագետի միտքը, ձեռքը և սիրտը համահավասար են տրոփել: Ես միշտ դեկավարվել եմ այդ սկզբունքով, ինչքան որ բնությունը ինձ շնորհել է: «Բնությունն անվերջանալի է, իսկ մարդն՝ անցողիկ,՝ սիրում էր կրկնել մատուրտ Երվանդ Քոչարը,՝ արվեստի ստեղծագործությունը բարձր է մարդուց, բուլո ջան, այդ միշտ հիշիր»:

Այո, սիրելի մատուրտն իրավացի էր, այսօր բոլոր արվեստագետներն էլ ճաշակում են դրա ճշմարտությունը»:

*Լևոնի հետ խոսում էինք գրականության մասին, և մա հանկարծ ասաց.* «Օրերս ձեռքս ընկավ Մակիչ Արզումանյանի «Նանսենը և Հայաստանը» գիրքը: Կարդում էի ու մտածում՝ ի՞նչ ուներ կորցրած այդ մեծ մարդը՝ Ֆրիտյոֆ Նանսենը, որ թողած Նորվեգիան, իր հոգսերն ու ցավերը, սկսեց զբաղվել ճտարության մեջ թափառող հայ գաղթականների ճակատագրով՝ նրանց օգնելու, նրանց հայրենի օրրանը վերադարձնելու: Հայրենաբաղձությունը հոգու քաղց է, որ կարող է հագենալ միայն այն

բաներով, որոնցով գոյանում է հայրենիքը: Մեր ժողովրդի տարագիր հատվածի հայրենադարձությունն աննախադեպ երևույթ է նրա ամբողջ պատմության մեջ: Նանսենին չհաջողվեց լրիվ կատարել այդ միսիան, չնայած, լինելով Ազգերի լիգայի կոմիսար, Եվրոպայում ճանաչված ճանապարհորդ և աշխարհագրագետ, նա ջանում էր օգտակար լինել հայ գաղթականներին, սակայն կային խանգարիչ հանգամանքներ:

Ես կարդում էի, և իմ աչքի առջև վեր էր բարձրանում այդ սքանչելի մարդու բարոյական կերպարը: Ես ստեղծեցի երկու գործ, մեկը Նանսենի դիմաքանդակը, մյուսը՝ «Նանսենը և հայ գաղթականները», կոմպոզիցիոն բարձրաքանդակը: Արարատ լեռան ֆոնի վրա: Նպատակ ունեմ այն մկրելու Նորվեգիայի և Շվեդիայի հայ համայնքին. որպես հայ ժողովրդի երախտագիտության սիմվոլ:

Հայ ժողովուրդն ունի բարձր հոգևոր գազաթներ: Ինձ համար այդ գազաթներից է Կոմիտասը: Տարիներ շարունակ երգելով երգչախմբում՝ հասկացել և հայտնաբերել եմ իմ Կոմիտասը, որը հայ երգի էպոսն է, ինչպես բնութագրել է իմ սիրելի մանստրո Հովհաննես Չեքիջյանը: Կոմիտասյան երգերում աշխարհը ոչ թե Աստծո, այլ մարդու ստեղծածն է: Հողոտ ու անձրևոտ. ծծված լույսով, թաթախված կալի մղեղի մեջ: Ասում եմ՝ արծվին ճիշտ հասկանալու համար պետք է զգալ երկնքի մեծությունը: Կոմիտասին ճիշտ զգալու և հասկանալու համար պետք է կողքը դնել ուրիշ մեծություններ: Կոմիտասը մորմոք է, բայց ոչ խեղճ ու անօգնական: Կոմիտասը երազ է, բայց ոչ կյանքից կտրված: Կոմիտասը ամբողջական է: Այդպիսի ամբողջության մեջ էլ տեսնում եմ Կոմիտասի մեծությունը: Իմ քանդակած կոմիտասյան

տարբերակներից մեկն այժմ գտնվում է Էջմիածնի Կոմիտասի թանգարանում:

Կոմիտասի թեմայի կատարելությունը շարունակվում է իմ ստեղծագործություններում, քանի դեռ երգում եմ կոմիտասյան երգերը: Արվեստը շատացնում է Աստծո տված գեղեցիկը, քարին աչքեր է պարզում, որ մայի մարդկությանը, ջութակին ձայն, որ լսելի դառնա մարդու ներաշխարհին: Իսկ մարդկային լսողության ներաշխարհը անվերջանալի է:

1978 թվականին արտասահմանի հետ կուլտուրական կապերի պետական կոմիտեի կողմից մեկնեցի Փարիզ, տեղի նկարիչների գրաֆիկական աշխատանքներ ընտրելու՝ Երևանում բացվող «Ֆրանսիացի գրաֆիկ-նկարիչների» ցուցահանդեսի համար: Փարիզում իմ ուղեկիցն էր ֆրանսահայ նկարիչ Արտավազ Բերբերյանը: Մի օր առավոտյան նա հյուրանոց եկավ և ասաց, որ այսօր գնալու եմք Մոնմարտր՝ տեղի նկարիչների գործերը նայելու: Մեքենայով բարձրանում էինք, կանգնեցնելու տեղ չկար: Մի կերպ սրա-նրա մեքենաները հրելով, խփելով՝ կանգնեցինք: Մնացած ճանապարհը ոտքով բարձրացանք: Չորս կողմը սրճարաններ էին, և նրանցից ամեն մեկը մի նշանավոր նկարչի հետ կապված հուշեր ունի:

Չմայած ես չէի սիրում սրճարան մտնել, բայց Արտավազ Բերբերյանի հետ մտանք մի սրճարան, որտեղ միշտ գալիս էին Վան Գոգը, Սեզանը, Գոգենը: Անչափ հետաքրքիր էր դա ինձ համար: Մտքով վերադառնում էի այդ ժամանակները: Ինչպիսի միջավայր, ինչպիսի մկրում: Կային խմբավորումներ, այդ խմբավորումները գաղափարական պայքարի արվեստի նոր ձևեր, նոր մեթոդներ փնտրելու պայքարի համար էր: Արվեստին, իս-

կական նկարչությանը անմնացորդ նվիրվելու խմբեր էին:

Մինչ ես գրուցում էի Բերբերյանի հետ, խոսում իսկական արվեստագետի նվիրումի մասին, մեր սեղանին է մոտենում մի մարդ. «Ներեցեք, — ասում է նա հայերենով, — եմքաղդում եմ, որ Հայաստանից եք, քանի որ լսեցի հայերեն խոսակցություն»: Արտավազդ Բերբերյանն ինձ ներկայացրեց՝ ասելով, որ Հայաստանն ժամանած եմ, իսկ ինքը փարիզաբնակ է, իսկ սեղանին մոտեցողը տեղի հայ նկարիչ էր, Մոնմարտրում նկարներ էր վաճառում: Երիտասարդը խնդրեց, որ գնանք և իր նկարները նայենք, եթե հավանենք՝ կնվիրի:

Դուրս եկանք սրճարանից: Բազմամարդ էր բլուրը: Շատ զբոսաշրջիկներ կային: Ոմանք նստել նկարվում էին, որպեսզի իրենց հետ Մոնմարտրից հիշատակ տանեն, ոմանք Փարիզի տարբեր տեսարաններ էին առնում, ճիշտ այնպես, ինչպես որ Երևանում ամեն շաբաթ և կիրակի օրերին Մարտիրոս Սարյանի հուշարձանի շուրջ հավաքված երիտասարդ նկարիչների ցուցահանդեսվաճառքն է: Այդ երիտասարդի անունը Հրայր էր: Հրայրն ինձ և Բերբերյանին տարավ իր նկարների մոտ և խնամքով սկսեց ցույց տալ ու բացատրել: Ինձ հիացրել և խոր տխրություն էր պատճառել նկարների թեման: Դա Հայաստանն էր, Արարատ սարը: Հանկարծ հայացքս կանգ առավ մի դիմանկարի վրա՝ սև սքեմով: Կոմիտասն էր: Չարմանալի էր նկարի կոլորիտը՝ դեղնաշագանակագույն, Կոմիտասը՝ ձեռքերը իրար վրա դրած, զարմացած աչքերով նայում էր մարդկանց: Կարոտ կար նրա աչքերում, սակայն ուժեղ էր և հավատով լի: Ո՞վ գիտե, թե այն որ զբոսաշրջիկը, նայելով այս նկարներին, գլխի կընկներ, որ Հայաստան աշխարհի կարոտի պատառիկներն են սրանք, իսկ Կոմիտասը՝ նրա մարդկային

երգի էպոսը: Արդյոք կգտնվի՞ մի մարդ, որ կհասկանա այդ նկարների արժեքը և նկարչին վճարելով իր ուզած գինը՝ կառնի իբրև Փարիզից, Մոնմարտրից բերված հուշանվեր: Սակայն փարիզաբնակ նկարչին պետք չէր, որ այդ նկարները վաճառվեն, այլ այն, որ աշխարհի տարբեր երկրներից մարդիկ գան տեսնեն ու իմանան, որ հենո՞ւ Արարատի ստորոտին Հայաստան աշխարհի կա, որ նրանում ապրող մարդիկ հայեր են, և որ այդ հայերը տխո՞ւր-տխո՞ւր աչքեր ունեն: Հրայրին իմ այն հարցին, թե նա եղե՞լ է Հայաստանում, նա լուռ նայեց աչքերիս և կարծես թե իմ աչքերում էր ուզում տեսնել Հայաստանը:

Երևան վերադառնալուց հետո երկար ժամանակ հիշում էի Հրայրին և նրա նկարած «Կոմիտասը», և ներքին մի մեծ անհանգստություն էի զգում՝ նորից ձեռնամուխ լինելու այդ մեծ երգահանի կերպարին: Ցանկություն ունեի Էջմիածնում, Կոմիտասի թանգարանի դիմաց, դեպի եկեղեցի տանող ճանապարհին տեղադրելու «Կոմիտասը»: Հավանաբար դա կլինի իմ ամենամեծ սիրո գնահատականը մեծ Կոմիտասի հանդեպ:

1988 թվականը հայ ժողովրդի պատմության մեջ կմնա որպես արդարության համար մղվող պայքարի տարի: Ժամանակակիցների և գալիք սերունդների հիշողություններում այն կմնա որպես անմախաղեպ աղետի, աշխարհացունց երկրաշարժի տարի: Լեռնային Ղարաբաղի (Արցախի) հարցի արդարացի լուծման, մայր հայրենիքին վերամիավորվելու համար խաղաղ պայքարի ելած հայ ժողովրդի ձգտումները ջարդվեցին սուսգայիթյան, կիբովաբաղյան, Խոջալուի ոճրագործություններով, ինչպես 1915-20 թվականներին օսմանյան Թուրքիայի կողմից կազմակերպված ցեղասպանությունը լուրջյան մատնվեց, և մինչև այսօր համաշխարհային կարծիքը լռել է, այնպես էլ 20-րդ դարի վերջին, մեր օրերում, մեր

աչքի առջև կատարված ոճրագործությունները դիտվում են իբրև երկու ազգերի, այսպես ասած, ազգամիջյան բախումներ, ո՞ր է ճշմարտությունը, ե՞րբ է այն հայտնվելու: Մի՞թե մեղավոր է հայը միայն նրա համար, որ ճակատագրով անգոր է, չունի ոչ մի պաշտպան, ոչ մի զենք՝ բացի իր միասնությունից:

Բայց ես հավատացած եմ իբրև հայ, իբրև մտավորական, որ եթե մենք՝ հայերս, կարողանանք լինել միասնական, մեզ ոչ մի ուժ չի հաղթի, նույնիսկ դա լինի ամենավերջին բարբարոսը, իսկ մենք դեռ միասնական չենք: Այսպիսի միտք հայտնեցի 1988 թվականի օգոստոս ամսին, երբ մեկնել էի Արգենտինա, Բուենոս Այրեսի «Արմենիա» հրապարակում կանգնեցնելու հուշարձան, որը պետք է խորհրդանշի հայ ժողովրդի կարոտը: Այնտեղ ստեղծվեց ու հաստատվեց «Թռչող կռուներ» գաղափարը: Այդ գաղափարը նոր չէր ինձ համար: Հարավսլավիայում, ինչպես արդեն ասել էի, Պրիպլեպ քաղաքում կանգնեցվել էր: Այս նոր տարբերակը նոր պայմաններում նոր իմաստ ստացավ, այն կդառնա արգենտինահայ՝ շատ առաջադեմ գաղթօջախներից մեկի կյանքի սիմվոլը: Այդ արձանի իրականացումը հպարտության մի նոր բնութագիր կստեղծի իմ հոգում իբրև հայ, իբրև արվեստագետ:

## ՏԱՂԱՆԴԸ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ Է ԲՈՒՈՐ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑՆԵՐԸ

*Ի շարս Լևոն Թորմաջյանին իմացող երևելի արվեստագետների՝ դիմեցի գրող Ռոբերտ Կարայանին՝ իմանալու նրա կարծիքը իր ընկերոջ մասին, ավելի ճիշտ՝ Թորմաջյանի արվեստի նրա գնահատականը:*

«Երբևէ չեմ եղել Իտալիայում, սակայն այնտեղ հարատևող աշխարհաճանաչ, աշխարհականչ Ֆլորենցիայի Ուֆիցի պատկերասրահի արարողակարգի որոշ մանրամասներին տեղյակ եմ ակնատեսների, լրատվական վկայություններից. այնտեղ բազմահազար այցելող հետաքրքրասերներին չեն ուղեկցում, և այս ու այն արժանահիշատակ կտավների և գեղաքանդակների վերաբերյալ մեկնություններ չեն հաղորդում թանգարանի աշխատակիցները: Հարգելի այցելու, միայնակ և ինքնամոռաց հաղորդակցվիր Լեոնարդո դա Վինչիի, Միքելանջելոյի, Ռաֆայելի և մնացյալ աստվածապարզ արարիչների ստեղծագործություններին...

Իրավ, հսկաները կարիք չունեն որևէ վերաբացատրման, որևէ մեկնաբանության և գնահատանքի: Նրանց կատարածն արդեն մարդկային սխրանք է՝ հավերժական լուսանշանով...

Վերջերս արվեստագետ ծանոթներիցս մեկը խնդրեց մասնավոր իմ կարծիքը՝ Լևոն Թորմաջյան քանդակագործի մասին... Դե արի, պատկերասրահում գործող, մանավանդ, իմաստախոս Լեսսինգի «Լաոոկոնի» քերած պահանջներով, մի լռիր հարցնող բարեկամիդ

խնդրանքի առաջ. մահաբեր օձահրեշտով փաթաթված հերոսը, թվում է, հազարացավից պիտի բերանբաց մռնչա երկինքն ի վեր, սակայն հավերժական քանդակի մեծ վարպետը նրան բացահայտել է լուռ, քարեղեն ուժով... Սա, անպայման, ստեղծագործական անգմահատելի արժեք է:

Այո, անկասկած արժեքներ են՝ վաղեմի իմ բարեկամ Լևոն Թոքմաջյանի շատ ու շատ քարե հրաշքները, դրանց թվում՝ Նոյ Նահապետի և արքայից արքա Տիգրան Մեծի քանդակները...

Սակայն մեծաչափ ցավ ու ափսոսանք ապրեցի, երբ այդ պանծալի ստեղծագործությունները տեսա տեղադրված Հանրապետության նախագահական պալատի բարձր պարսպապատ երկաթե դարպասների՝ աջ ու ձախ կողմերում... Ի՞նչ է, նախագահի աշխատակազմի մարդիկ անբավարար և քչաթի՞վ են համարել մեծարգո նախագահի անվտանգությունն ապահովող ծառայողների աջալրջությունը և այդ պահանջով, որպես «արթուն» պահակների՝ դարպասների մոտ «կանգնեցրել են» հայոց ազգի փառավոր ռաիվիրաներին՝ Նոյ Նահապետին և Տիգրան Մեծին... Մի՞թե հայոց վսեմ կերպարները ազգային, համաժողովրդական արժեքներ չեն, և ինքը՝ Նախագահ Ռոբերտ Զոչարյանը և նրա աշխատակազմի «ազգանվեր» մարդիկ՝ հոյակերտ այդ արձանների արժանի վայրը չգտան՝ մայրաքաղաքի աչքառու կենտրոնատեղերից մեկում...

Չէ, չկա չարիք՝ առանց բարիքի,– ասում է ժողովուրդը: Երևի թե ժամանակավոր ճիշտ են վարվել խառնակ այդ գործի պատասխանատու մարդիկ, որ տաղանդավոր քանդակագործի նշանավոր այդ աշխատանքները պահպանում են ապահով դարպասների ետևում, քանզի շատերին է հայտնի, թե մղձավանջային և անպատժելիության մեր ժամանակներում ինչպես օրը ցերեկով

պղծվեցին Ստեփան Շահումյանի, Ալեքսանդր Մյասնիկյանի, ուրիշների հայտնի արձանները: Այո, մայրաքաղաքի Չեխովի անունը կրող դպրոցաբակից անհետացավ մահ ռուս մեծ գրողի կիսանդրին...

Ուրեմն, վստահ լինենք, որ բարի և ապահով ժամանակներում, որ չեն ուշանա մեզանում, վարպետ Լևոն Թոքմաջյանի ստեղծած արժեքները կգտնեն համաժողովրդական, իրենց վայել տեղավայրը...

Տարիներ առաջ, հայրենաշունչ բարեկամիս եմ միլիոնել այս բանաստեղծությունը.

### Ո՞ՆՑ ՉԻՄԵՄ, ՄԻՐՈՒՆ ՏԻԿՆԱՅՔ

Քանդակագործ Լևոն Թոքմաջյանին

Հին Աստաֆյան փողոցն ի վեր,  
Հին քաղաքի մի մութ դալան.  
Բյուր վարդեր է կանանց տվել՝  
Ծաղիկ ծախող Կարաբալան:

Մեծ Չարենցն է հետը խմել,  
Դերասաններն հերվա բեմի,–  
Կարաբալան շատ է տխրել,  
Հետո էլ զամբյուղն հմամենի:

«Ո՞նց չխմեմ, սիրուն տիկնայք,  
Չար հուշերս սիրտ են քանդում,  
Մեր ծաղիկներն՝ ալ ու ճերմակ՝  
Միս, մնացին տխուր բանտում»:

Ո՞նց մոռանա մեծ նաիրցուն՝  
Նստած խցում «օղինոչնի»–  
Հիմա թողեք՝ հեզ ու նազան  
Աղջիկներին ծաղկով պճնի:

Եվ վարդերով՝ ձեռն է պարզել  
Կարաքալան՝ սրտում օղի,  
Ողջ քաղաքն է շիկնել-նագել  
Նրա բույրով մեծ զամբյուղի:

Աստաֆյանի նորոգ մայթին –  
Ինչ երանի լույս ու խնդում.  
Վեհ արձանն է մարդ-լեզենդի՝  
Չարենցի հետ նստած բանտում...

Հագին՝ երկար, հին վերարկուն,  
Կողքին՝ գինու շիշը դատարկ,  
Հին զամբյուղը՝ պարպած վաղուց,  
Ձեռին՝ մի վարդ՝ ամենաթանկ:

Ո՛վ Տեր Աստված, ո՞նց համբերես –  
Ցուրտ է քաղաքն այս նաիրյան.  
Մեկը՝ հազար ծաղիկ բերեց,  
Մեկը՝ զրկանք, ձյուն ու բորան...

Ախ, ինչ անի Կարաքալան,  
Ո՞նց չխմի ու ցնորի –  
Ոտքերի մոտ՝ կին-մուրացկան՝  
Ձեռք է պարզել խեղճ անցորդի...

1993

ՌՈՔԵՐՏ ԿԱՐԱՅԱՆ

## ՆՈՐԸ ՀՆՈՎ Է ԿԵՆՍՈՒՆԱԿ

### Որպես վերջաբան

Քանդակագործ Լևոն Թոքմաջյանի համար իր ըն-  
տանիքը եղել է մի փոքրիկ այգի, իսկ զավակները՝ շիվ ու  
շյուղ: Եվ որպես այգեպան՝ դողացել, լուսե հավատով  
սպասել է ամեն բողբոջի ու ծաղկի: Այսօր վաստակած  
արվեստագետը երջանիկ է ու հպարտ, որ իր զավակնե-  
րը՝ եթե ոչ տրվածի համապատասխան, ապա կարողա-  
ցածի չափով հատուցում են երբեք չհատուցվելիք  
պարտքը: Եվ որպես հավատք՝ ցանքսն ու հունձքը  
ավարտած այգեպանին որդիական ամենախորին  
երախտագիտությամբ խոսք են ասում քանդակագործ-  
ներ Վահե և Հայկ Թոքմաջյանները:

– Վահե, ի՞նչ եք խորհում, երբ դիտում եք ձեր հայրի-  
կի քանդակները:

– Նրա արվեստը գիրկընդխառն է բնությանը, ներ-  
շնչանքի և ճշմարտության ճանաչման համաձույլ ներ-  
դաշնակում: Երբ փոքր էի, հայրս իմ ուսուցիչը, դաստիա-  
րակը և խորհրդատուն էր. մեծ տարիքում դարձանք  
գործընկերներ:

Մինչդեռ արվեստում ոչինչ լիակատար չէ, մանա-  
վանդ նյութի ընդգրկման առումով, որի մեջ բեկվում են ոչ  
միայն արվեստագետի, այլև ժողովրդի ոգին, նրա կրած  
տառապանքն ու մղած հերոսամարտերը, հրճվանքն ու  
դառնությունը, հոգեկան մաքրությունն ու իմաստությունը:

Ուստի աշխատանքում, որպես գործընկեր, մենք  
դուրս ենք գալիս հայր և որդի շրջանակից ու զգացմունք-

ներից և մեր մտածումները, ապրումները, ինչու չէ, նաև վեճերը ստանում են ընդհանուր մշակութային իմաստ: Թերևս այդպիսի (ես կասեի՝ եզակի) ներդաշնակությունն էլ օգնեց հայրիկիս ստեղծելու արվեստի այնպիսի գործեր, որոնք ընդունվեցին ու ճանաչվեցին ժողովրդի կողմից: Անշուշտ, գլխավոր ազդակը Թոքմաջյան քանդակագործի աշխատասիրությունը, սկզբունքայնությունը և շիտակությունն է, իր գործի նկատմամբ մեծ սերն ու մաքրությունը:

– *Դուք ընդունո՞ւմ եք, որ ձեր հայրը տաղանդավոր է:*

– Այսօրվա տենդոտ, նյարդային օրերի մեջ մենք շատ հաճախ կորցնում ենք քանականության այն զգացողությունը, որ ստեղծում է իսկական արվեստագետը: Այդ զգացողության պակասն էլ փոխանցվում է մարդու էությանը, վերափոխում նրա նկարագիրը: Եվ սա է աղետալին: Այսօր յուրաքանչյուր ոք իրեն տաղանդավոր է համարում (թող ինձ ներեն իսկական բոլոր տաղանդավոր արվեստագետները): Բնականաբար, իմ խնդիրը չէ քարոզել կամ պատգամել, սակայն իմ համոզումն է, որ արվեստագետը պետք է փորձի ներգործում հարաբերություններ մշակել իր ժամանակի հետ: Հայրս մեծ արվեստագետ է, քանզի նրա ստեղծագործություններում բաբախում է ժամանակի կշռույթը, որտեղ ներկայացվում է իր օրերի կյանքը, այդ օրերի մեջ ապրող, գործող հերոսը՝ ցույց տալով այդ հերոսի էությունը: Նկարագրով ու հավատքով, որի մեջ խտացնում է նա իր բարոյական ըմբռնումները, որոնք վերաճում են մարդկային փոխհարաբերությունների, ապրած վիճակների մեջ կյանքի իմաստը ճշտելու հարցադրումների: Ուսումնասիրեք Թոքմաջյանի անցած ստեղծագործական ուղին, կհամոզվեք, որ հորս, որպես մեր օրերի մարդու և ստեղծագործողի, հավասարապես հուզում են և՛ պատերազմի ու

խաղաղության, և՛ հավատի ու մաքրության, և՛ կյանքի ու ճշմարտության խնդիրները:

Եվ թող անհամեստ չինչի, եթե ասեմ, որ Թոքմաջյան քանդակագործի արվեստը հանդուգն խոյանք եղավ, որ չափվելով եվրոպական քանդակագործության հետ՝ բարձրացրեց հայ քանդակագործությունն աշխարհում: Ասածիս վառ ապացույցն է Իտալիայում, Հարավսլավիայում, Լեհաստանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Վրաստանում, Ղրղըզստանում, Ուկրաինայում նրա ստացած պարգևներն ու մեծարանքի ծափողջույնները: Թոքմաջյանը թողնում է արվեստի գործեր, որոնք խոսում են և պիտի խոսեն գալիք սերունդների հետ, ինչպես Թումանյանի պոեզիան, Սարյանի կտավները, Խաչատրյանի երաժշտությունը:

– *Համաձա՞յն եք այն քննադատությունների հետ, որոնք հնչել են ձեր հայրիկի ու նրա արվեստի մասին:*

– Բավական է թերթել անցած-գնացած օրերի պարբերական մամուլը՝ համոզվելու համար, որ ոչ մի լուրջ, տեսական-վերլուծական քննադատություն Թոքմաջյան արվեստագետի մասին չի հրատարակվել: Եթե մույնիսկ վարկաբեկող հրապարակում էլ գրվել է, ապա սիրողական, ոչ մասնագիտական մակարդակով:

Ժամանակին բոլոր մեծ արվեստագետներին մերժել են, փշերով ընդունել: Բարեբախտություն է, որ պատմությունը սրբագրում է, տալիս արժանի գնահատական և մեծություններին դնում իրենց համապատասխան պատվանդանի վրա: Ես հոգով խաղաղ եմ, որ ասելիքից զուրկ այդ հոդվածները չեն ընկճում հորս, չի մարում նրա սերն ու հավատը արվեստի ուժի, մարդկային հոգու գեղեցկության նկատմամբ: Հայրս երազներով, տեսիլքներով ապրող քանդակագործ է, որի համար քանդակելը հոգու պարտք է, անդիմադրելի պահանջ, կյանքի գերագույն նպատակ, գոյության կովան:

Նրա կատարած գործերը համառոտ հայրերի մեծածավալ գործերի անմասնադեպ խտացումներն ու քանակացումներն են: Եվ չնայած կյանքի դժվարին պայմաններին, նա միշտ լավատես է, գալիք պայծառ օրերի խորունկ հավատով լցված: Նրա ստեղծագործական ճանապարհը ուղղագիծ է և վերընթաց, որը պաշտում է գեղեցիկը, պայծառ է արարելու միտքը:

*Ձրույցը շարունակում է կրտսեր որդին՝ քանդակագործ Հայկ Թոքմաջյանը:*

– Որպեսզի կարողանամ անաչառ գնահատել Լևոն Թոքմաջյանի արվեստը, պետք է հայացքս շրջեմ անցյալը, չափեմ և կշռեմ 60-70-ական թվականների նրա թողած ժառանգությանը, որտեղ իշխում էր մրցակցություն, զուսպ ու լուրջ քննադատություն (ոչ այսօրվա մակերեսային, ցաք ու ցրիվ, անհիմն սպրդումներ, որ հայտնվում է մամուլում կամ պատերի տակ): Խստապահանջ հայ արվեստասեր հասարակությունը ընդունում էր մաքուր, ճշգրիտ, գեղեցիկ արվեստ: Իսկ խորհրդային Մոսկվան խրախուսում էր և ճանաչում տաղանդավոր անհատականություններին:

Մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի թևավոր միտքը կարծես ասված է նաև հայրիկիս համար. «Հայ ազգի ազնվականության վկայականը» ձեռին բարձրացրել է ոչ միայն իր, այլև իրեն ծնող ժողովրդի հեղինակությունը, վկայել որ թեև ածու ենք փոքր, բայց հին ժողովրդի հանճարն էլ կարող է խոսել մարդկային սրտի ամենամկիրական և ամենաքնքուշ զգացմունքների հետ:

Ահա, նման մթնոլորտում հայրս ոչ միայն ճանաչվել է որպես տաղանդավոր քանդակագործ, այլև այդ տարիներին նրա քանդակները ցուցադրվել են աշխարհի շատ երկրներում: Ժամանակներին համահունչ, շարունակելով իր սկսած գործը, նա արվեստի տրոթած ճանապարհներից ելքեր է որոնել: Որոնման հետ մեկտեղ հզո-

րացրեց ասելիքի իմաստային ենթատեքստը և քայլեց այն ճանապարհով, որը տանում է արարումների, զգացումների նոր, կուսական ու մաքուր մի աշխարհ՝ արցախյան պատերազմ, անկախություն ձեռք բերած հայրենիք, որտեղ դրսևորվում է քանդակագործի հերոսության, երազի, սիրո, թախծի, կարոտի էությունը:

Մի առիթով ես նրան հարցրի, թե ինչպիսի՞ն կլինեի իր արվեստը, եթե ստեղծեր այնպիսին, որը մնացել է խորհրդային շրջանի պատմության համար: Նա խոժոժված դեմքով, զսպված կրթով ու կուպտացած ձայնով պատասխանեց. «Որպես քանդակագործ՝ ես կվերջանայի»:

Նա զգացել է իր ժողովրդի ցավն ու տառապանքը, ուսումնասիրել հինգհազարամյա պատմությունը: Թոքմաջյան արվեստագետը ապրել է միշտ բուռն, երազներով առլեցուն: Ոչ մի հանգիստ վայրկյան: Նա իր յուրաքանչյուր քանդակում նյարդ է դրել, տաք սիրտ և երևակայություններով հարուստ միտք: Նա իր արվեստով ոչ թե ապրում, այլ այրվում է:

Բառերս ու միտքս ոչ չափազանցված են, ոչ պատահական, քանզի ես փոքրուց տեսել եմ նրա նվիրումը դեպի արվեստը և ստեղծագործական եռանդը:

Ինձ համար ուսանելի է նրա աշխատառճը: Ինստիտուտում իմ դասախոսն ու դեկավարն է եղել Արա Հարությունյանը, տանը՝ հայրս: Այդ երկու մեծ քանդակագործների շնչի տակ ձևավորվեց ու հասունացավ իմ արվեստը:

*– Ինչպե՞ս եք վերաբերվում քննադատությանը՝ որպես արվեստագետ:*

– Ո՞վ ասաց, թե քանդակագործ Լևոն Թոքմաջյանը բարձր է ամեն քննադատությունից: Ինչպիսի մեծություն էլ լինես, միևնույն է, անքննադատելի չես: Ես արվեստագետ եմ և շատ եմ կարևորում արվեստագետի կյանքում առողջ քննադատությունը: Դա այն մղիչ ուժն է, որ միշտ

ցույց է տալիս ճանապարհը դեպի կատարելություն: Մինչդեռ այսօրվա քննադատությունը չի բարձրանում բամբասանքի մակարդակից և չարության ու նախանձի ծնունդ է, որից անկեղծորեն տհաճության և նույնիսկ վրդովմունք են ապրում:

Սակայն այսօր ո՞ւմ հետ համեմատեն հայրիկիս... Նա այն քանդակագործն է, որ իր տեղը նվաճելու պատմական իրավունքի համար մղվող պայքարում հաղթանակել է, որի վառ վկայությունն է Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում և Եվրոպայում մշտական բնակություն հաստատած նրա քանդակները:

– Հայր և որդի Թորմաջյանների միջև վեճեր ծագո՞ւմ են:

– Հայրս խստապահանջ արվեստագետ է: Նա չի ընդունում միջակությունը: Իմ խորին համոզմամբ, և դա այդպես է, քանդակելը վերջին հաշվով ինքնաճանաչման է ծառայում: Վեճերը մեր միջև սովորաբար մեր գործերի, արվեստի շուրջ է: Ուրախության հետ մասնահանգստության զգացումով են լսել նրա հորդորները, դիտողություններն իմ աշխատանքների վերաբերյալ:

Բնականաբար, երիտասարդ արվեստագետը ուրիշ մտածումներ ունի, որոնք դրսևորվում են ստեղծագործություններում, բայց ես հաշվի եմ նստում նրա յուրաքանչյուր կարծիքի հետ: Ի վերջո, տարբեր տեսակետները նպաստում են արվեստին: Ես ուրախ և հպարտ եմ, որ հայրս ինձ համար եղել և մնում է ուսուցիչ: Հավանաբար դա նրա հարաճուն տաղանդի արգասիքն է: Եվ արվեստում ինչ արել ու անում է, եղել է հավատի մղումով՝ ի սեր հարազատ ժողովրդի:

*Լևոն Թորմաջյանն իր սիրասուն որդիների հետ ստեղծեց համաշխարհային համբավով պսակավոր բազում քանդակներ: Նրանց արվեստը սերմանում է առաքինություն ու բարություն, ամճնազոհություն ու սիրո հավատարմություն, նվիրվածություն ու հավատ, որը բոլոր ժամանակների համար լավատեսություն ներշնչող ազդակ է և թելադրում է փիլիսոփայական մոտեցումով դիմագրավել դժվարությունները:*

*Եվ երբ գրելու լինեն քանդակագործ Լևոն Թորմաջյանի մասին, չեն մոռանա նշել, որ նա էլ, բոլոր մեծ արվեստագետների նման, իրականության և երազների դաշնության միջով անցնող հավերժական ճամփորդ է, որ երբեք բարեկամներին ու ծանոթներին կասկածամիտ հայացքով չի բարևել և միշտ մնաց մեծ երեխա, ինչպիսին նրա արվեստն է, որի հիմքում ապրումի և լինելիության բացառիկ շնորհն է: Եվ այս չէ՞ միթե իսկական արվեստի թանկագին պարզև մարդուն, որի համար չես կարող երախտապարտ չլինել Թորմաջյան արվեստագետին:*

ՀՏԴ- 730 (479.25)  
ԳՄԴ- 85.133 (2Հ) 7  
Թ 844 ս

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք (Հովհաննես Մուրադյան) ..... 3

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

Արվեստագետի որոնող հոգին համառ է և աննկուն ..... 9

Ճշմարիտ արվեստագետը տիեզերքի

շնչառությունն է ..... 17

«Կանգ առ, ակնթարթ, ահա գեղեցիկը» ..... 23

Ծնվում է կավից, ապրում քարի մեջ ..... 30

Բազմանիստ են արվեստագետի ձիրքերը ..... 40

Ստեղծագործող անհատը երկրի հարստությունն է ..... 45

Ես երբեք ինձ այսչափ վարձատրված չեմ զգացել ..... 51

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Արվեստագետն ինքն իր մասին ..... 59

Տաղանդը հաղթահարում է բոլոր

արգելափակոցները ..... 83

Նորը հնով է կենսունակ ..... 87

Սուքիասյան Ս.  
Թ 844 ս Մի կաթիլ բարություն / հողվածներ, հարցազրույցներ:  
Եր.: Նաիրի, 2002, 96 էջ:

4903030000  
Թ \_\_\_\_\_ 2002  
705(01)2002

ԳՄԴ- 85.133 (2Հ) 7

ISBN 5-550-01258-8

© «Նաիրի» հրատարակչություն, 2002

3.2  
ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՄԻ ԿԱԹՈՒԼ ԲԱՐՈՒԹՅՈՒՆ  
(Հոդվածներ, հարցազրույցներ)

Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան  
Համակարգչային շարվածքը՝ Ն. Ա. Վարդանյանի  
Էջադրումը՝ Օ. Ղ. Թերզյանի

Պատվեր՝ 2: Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ  
Երևան-9, Տերյան 91



